

23403

№ 2 ՀՐԱՏ. Դ. ՄԻՆԱՍԵԱՆԻ

ԱՐՁԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ

ՕՊԵՐԵՏ 4 ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԱՐ

Հեղինակ՝ ԻԻՋԵՐ ԲԵԿ ՀԱՅԻՐԵԿՈՎ
Թարգմանիչ՝ Ա. ՎՐՅՈՐ

ԳԻՆՆ Է՛ 50 Կ.

(Այս թարգմանությունը հեղինակը հաւանել է ևս տեղի իրա յատուկ թոյլտուութիւնը)



894-362

Ա-92

Բ ա գ ու

Էլէք.-տպ. Ն. Երեւանցեանի
Баку, тип. Н. А. Эрянцова
1916

Изд. Д. Минасяна
АРШИНЪ малъ АЛАНЪ
Соч. Юзеир. Гаджибекова

894.362

Ա - 92 № 2 ՀՐԱՏ. Դ. ՄԻՆԱՍՅԱՆԻ

ԱՐՁԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ

ՕՊԵՐԵՏ 4 ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

Հեղինակ՝ ԻՐՁԷՐ ԲԵԿ ՀԱՅԻՔԵՆՈՎ
Թարգմանիչ՝ Ա. ՎՐՈՅՐ

(Այս թարգմանությունը հեղինակը հաւանել է եւ տուել իրա յատուկ թոյլտուութիւնը)



Բ ա գ ու լ
Էււր.-ուպ. Ն. Երեւանցեանի
1 9 1 6

Изд. Д. Минасяна
АРШИНЪ малъ АЛАНЪ
Баку, тип. Н. А. Эриванцова

2012

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ



115350-ԱԷ



3132-84

ԱՐՁԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ



ԳՈՐԾՈՂ ԱՆՉԻՆՔ

ԱՍԿԵԱՐ,—երիտասարդ հարուստ վաճառական
 ԶԱՀԱՆ,—նրա մօրաքոյրը, (խալան) գեր կին
 ՍԻԻԼԷՅՄԱՆ,—Ասկեարի ընկերը
 ՎԷԼԻ,—Ասկեարի ծառան
 ՍՈՒԼԹԱՆ ԲԷԿ,—կալուածատէր, տարիքով
 ԳԻԻԼՉՕՀՐԱ,—Սուլթանի բէկի աղջիկը
 ԱՍԵԱ,—Սուլթանի բէկի եղբօր աղջիկը
 ԹԷԼԼԻ,—Սուլթանի բէկի աղախինը

ԱՐՁԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ

Տեսարանը ներկայացնում է Ասկերի տանը հարուստ կահուսրած մի սենեակ:

1.) Ասկեր, Ջահան եւ Վէլի.

ԱՍԿԵՍԲ.—(Նրզում է ըայաթի Շիրազ.)

Աշխարհ լցրեց իմ ձայնը լացի,
Անընկեր, մենակ, տխուր մնացի,
Եւ միշտ պիտի լամ, թէ ինձ կտրատեն,
Ամբողջ մարմինս, անդամահատեն:

Գիտեմ անվիշտ ես, ով իմ սիրեկան,
Եւ դո՛ւ դարձրիր ինձ թափառական,
Ոչինչ, դու ապրիր, ուրախ անխռով,
Իսկ ես թող միշտ լամ, տաղուեմ ցաւով:

ՋԱՀԱՆ.—Մօրքուրը քեզ մատաղ լինի, ի՞նչ է պատահել
որ այդպէս տրտում տխուր երգում ես. լսողի
սիրտն է այրւում:

ԱՍԿԵՍԲ.—Եթէ սիրտը այրւում է, նշանակում է դու
զթոտ սիրտ ունես, այ՛ մօրքուր:

ՋԱՀԱՆ.—Ասածդ չհասկացայ, մօրքուրդ քեզ մատաղ լի-
նի, կրկնիր ասածդ որ հասկանամ:

ԱՍԿԵԱՐ.—Մի այնպիսի անհասկանալի բան չասեցի, որ կրկնելու կարիք լինի. հիմի դու ինձ լսիր, այ մօրքուր. մի ինձ ասա տեսնեմ. աշխարհը, որ այսպէս դայ ու այսպէս էլ գնահ, սրա վերջն ու մեր գործը ի՞նչ է լինելու:

ՁԱՀԱՆ.—Մօրքուրդ քեզ մատաղ լինի, փառք Աստուծոյ, աշխարհին ի՞նչ է պատահել:

ԱՍԿԵԱՐ.—Իմ ասելս էն է, որ այս բոլորը ի՞նչով է վերջանալու: Օրինակի համար, մենք այսպէս հասակ առանք, մեծացանք, փառք Աստուծոյ, ապրանք ու կարողութիւն կայ, բայց այս բոլորով հանդերձ մարդու կեանքը կատարեալ չէ լինում և դարձեալ մի բանի պակասութիւն է զգացում. ճիշտ չէ ասածս:

ՁԱՀԱՆ.—Մօրքուրդ քեզ մատաղ, ի հարկէ ուղիղ ես ասում, այնուամենայնիւ ասածներիցդ դարձեալ բան չկարողացայ հասկանալ:

ԱՍԿԵԱՐ.—Պարզ է ասածս, այ մօրքուր, ճշմարիտը խօսելով, այս ու այն կողմ նայելով տեսնում եմ, որ մի բան ինձ պակասում է:

ՁԱՀԱՆ.—Եթէ մի պակաս բան կայ, ծառային ուղարկիր՝ շուկայից թող առնէ բերէ. ի՞նչ մտածելու բան կայ այստեղ:

ԱՍԿԵԱՐ.—Դու իմ ասածը չես հասկանում. ես քեզ մի լուրջ բանի մասին եմ ասում, իսկ դու շուկայից ես խօսում: Իմ ասածս այն է, որ այս թափառաշրջիկ կեանքի վախճանը սուր է հասնելու: Փող ու ապրանք ունեմ, բայց փողատէրը պէտք է մի ուրիշ բանի էլ տէրը լինի, մինչդեռ տես-

նում ես, բոլորովին անփող մարդիկ ոչխարի մի հօտի չափ ունեն նրանցից:

ՁԱՀԱՆ.—Մօրքուրդ քեզ մատաղ. դու վաճառական մարդ, ոչխարի հօտը ի՞նչ ես անում:

ԱՍԿԵԱՐ.—Օ՛ֆ մօրքուրիկ, էլի չհասկացար թէ ի՞նչ եմ ուզում:

Վ Է Լ Ի.—(Յանկարծ) Ես իմանում եմ աղայի ուղածը:

ԱՍԿԵԱՐ.—Այ աղայ դու էլ ես այստեղ. դէ ասա տեսնեմ, ի՞նչ է իմ ուղածը:

Վ Է Լ Ի.—(Բծնելով) Ես իմանում եմ քո ուղածը:

ԱՍԿԵԱՐ և ՁԱՀԱՆ.—Դէ որ գիտես ասա. էլ ինչի՞ ես սպասում:

Վ Է Լ Ի.—(Յանկարծ հոհուալով արագ փախչում է. իսկ Ասկեսարը՝ ժպտում)

ՁԱՀԱՆ.—Կարծես ծառան գժուել է: Մօրքուրդ քեզ մատաղ, ինձ մի լաւ հասկացրու տեսնեմ թէ ի՞նչ է ուղածդ:

ԱՍԿԵԱՐ.—Այ մօրքուր, ինձ լսիր. քո կարծիքով ես քանի տարեկան կը լինեմ:

ՁԱՀԱՆ.—Այս ուսման ամիսը չէ, այլ յաջորդ տարւայ ուսմանը դալ ու անցնելուց յետոյ 28 տարիդ կը լրացնես: Բայց ինչի՞ ես դարդ անում, դու դեռ երեխայ ես և հարիւր տարի կարող ես ապրել:

ԱՍԿԵԱՐ.—Տարօրինակ բան. բայց որքան էլ որ երեխայ լինեմ, այնուամենայնիւ ոտքի վրայ կարող եմ կանգնել:

2.) Նոյնը և Վէլի:

Վ է Լ Ի.—(Մտնելոյ նախկին դիրքոյ կանգնում է):

ՁԱՀԱՆ.—Ի հարկէ որ կարող ես կանգնել, փառք Աստուծոյ, քաջառողջ երիտասարդ ես:

ԱՍԿԵԱՐ.—Լաւ, ուրեմն այդ քաջառողջ երիտասարդը ի՞նչ անէ. միայն ուտէ և քնէ:

ՁԱՀԱՆ.—Ասկեար, թէ Աստուածդ կսիրես, արի ինձ հետ պարզ լեզուով խօսիր, որ ես էլ մի բան հասկանամ. չէ որ ես մի պարզ կիւն եմ. մօրաքոյրը քեզ մատաղ. միթէ ես արաբերէն կարող եմ հասկանալ:

ԱՍԿԵԱՐ.—(Մեկուսի) Է՛հ, էլ ամաչելու տեղը չէ. (Ջահանին) Դիտէս ինչ կայ, մօրքուր, ես կամենում եմ ամուսնանալ, կիւն առնել, կիւն:

Վ է Լ Ի.—Չէ որ ես ասում էի:

ՁԱՀԱՆ.—Մօրաքոյրդ քո ցաւդ ասնի. էլ ո՛ւր ես շուռ ու մուռ տալիս, այդպէս ասա, որ ես էլ բան հասկանամ:

ԱՍԿԵԱՐ.—Այո, ուրեմն իմացիր, որ ես ամուսնանալ եմ կամենում:

ՁԱՀԱՆ.—Նւ շատ էլ լաւ ես անում, մօրքուրը քեզ մատաղ լինի: Աստուած ինձ արժանացնէ այն օրւան, որ ես արժանանամ քո հարսանիքին պարել: (Վէլին մտնում է) Տես, Ասկեար, մօրքուրը քեզ մատաղ, վերջ ի վերջոյ դու էլի իմ խօսքին եկար. քանի ժամանակ է, որ քեզ ասում եմ, Ասկեար, արի ամուսնացիր, առն ու տեղի տէր եղիր, բայց ինչ օգուտ, որ դու ինձ չէիր լսում: Ի հարկէ. կիւն ուղիւր և հարօանի-

քովդ թող բարեկամներդ ուրախանան, իսկ թըշնամիներդ խորտակեն: (Վէլին ա՛խ է քաշում) Ուզում ես հէնց էս օրուանից քեզ համար կը գնամ աղջիկ փնտռելու: Հանգուցեալ քոյրս, մինչև հոգին աւանդելը ասում էր «Ջահան, տես. Ասկեարին քեզ եմ յանձնում, գնում եմ, նրան միայնակ մի թողնիր, ամուսնացրու... (լալիս է, Վէլին խորը ախ է քաշում):

ԱՍԿԵԱՐ.—Իէ, այստեղ լալու բան չկայ, մի անգամ որ խօսքը բացուել է, տեսնենք վերջը ո՛ւր է գնում:

ՁԱՀԱՆ.—Մօրքուրդ քեզ մատաղ, ամուսնացիր:

ԱՍԿԵԱՐ.—Բայց ես ինչպէս ամուսնանամ. ամուսնութիւնը այնքան էլ հեշտ գործ չէ:

ՁԱՀԱՆ.—Մօրքուրը քեզ մատաղ, ամուսնանալը ջուր խմելու պէս հեշտ մի բան է. ի՞նչ գժուարութիւն կայ այդտեղ. փառք Աստուծոյ, թէ երիտասարդ ես, թէ փող ունես և թէ կարողութիւն. Աստուած է վկայ, թագաւորի աղջկանն էլ ուղենաս՝ քեզ կտայ: Այստեղ երկար մտածելու բան չկայ. թող հէնց այսօր չադրբս գլխիս գցեմ գնամ քեզ համար աղջիկ բնորեմ. և եթէ կամենում ես՝ ինքդ ինձ ասա, որ բէկի կամ վաճառականի աղջկան ուզում ես, գնամ քեզ համար առնեմ:

ԱՍԿԵԱՐ.—Բայց ես ի՞նչ գիտենամ թէ որ բէկի կամ վաճառականի աղջիկն է լաւը, որ ասեմ գնա ու գիր՝ քանի որ ինքս չեմ տեսել նրանց:

ՁԱՀԱՆ.—Վահ, մօրքուրը քեզ մատաղ լինի, ապա իմ աչքերը կոյր են: Աստուած է վկայ, կերթամ ման

կուգամ, կը փնտրեմ, կը նայեմ, կը ջոկեմ և մի այնպիսի աղջիկ կաննեմ, այնպիսի աղջիկ որ մարդ նայելիս խելքը գնայ:

ԱՍԿԵԱՐ.—(Ծիծաղելով) Այ մօրքուր, եթէ այդպէս լինի, ուրեմն իմ էլ խելքս կըգնայ ու խելագար կը լինեմ: Ոչ մօրքուրս, ես դրան համաձայն չեմ. աղջիկը պէտք է որ ես ինքս տեսնեմ, եթէ հաւանեցայ՝ կաննեմ, իսկ եթէ ոչ՝ չեմ առնի:

ՋԱՀԱՆ.—Ապա դու տղամարդ տեղովդ աղջկան ինչպէս ես տեսնելու. միթէ՞ քեզ աղջիկ ցոյց կը տան:

ԱՍԿԵԱՐ.—Բանը հէնց դրանումն է, որ առաւօտուանից քեզ ասում եմ թէ սրա վերջը ինչ է լինելու: Ամուսնանալ եմ ուզում, բայց չգիտեմ թէ ո՞ւմ առնեմ. որովհետեւ ոչ ոքի չեմ տեսել, և տեսնելու էլ հնար չկայ:

ՋԱՀԱՆ.—Այ մօրքուրը քեզ մատաղ լինի, դու արի քո պապերի ճանապարհով ամուսնացիր. քո ինչ գործն է. ես գնամ քեզ համար աղջիկ առնեմ, եթէ վառը լինի՝ մեղքդ շնքիս:

ԱՍԿԵԱՐ.—Այ մօրքուր, ինչ ես կարծում, ես արշինը երկու շահանոց չիթը առանց տեսնելու չեմ առնում. եթէ մեր պապերի ճանապարհով ամուսնանամ՝ շարունակ պէտք է կլին առնեմ—արձակեմ, կլին առնեմ—արձակեմ՝ մինչև որ մէկը ինձ դուր գայ ու մնայ... ոչ, ես այդ ձևով չեմ կամենում ամուսնանալ. եթէ հնարագէտ ես, ինձ մի միջոց գտիր որ նախ աղջկան կարողանամ տեսնել և ապա առնել:

ՋԱՀԱՆ.—Մօրքուրը քեզ մատաղ լինի, ես ինչ միջոց կարող եմ ցոյց տալ. եթէ կլին լինելի՞ր՝ քեզ տնէ տուն կը ման ածէի:

ԱՍԿԵԱՐ.—(Ժպտալով) Եթէ կլին լինելի խօ կլին չէի ուզի...

Վ Է Լ Ի.—Ա՛խ:

ՋԱՀԱՆ.—Ուրեմն ինչպէս անենք:

ԱՍԿԵԱՐ.—Ես էլ հէնց այդ եմ մտածում թէ ինչպէս անենք:

Վ Է Լ Ի.—Ա՛խ...

3.) Նոյնը եւ Սիւլէյման

ՍԻԻԼԷՅՄԱՆ.—Բարև ձեզ. հ՛ր. Ջահան մօրաքոյր, քէֆդ ինչպէս է, ժաժումած գալիս ես թէ չէ: Վէլի, դու ինչպէս ես:

ՋԱՀԱՆ.—Փառք Աստուծոյ, Սիւլէյման:

Վ Է Լ Ի.—Շատ ապրես, բէկ:

ՍԻԻԼԷՅՄ.—(Նրդում է իւրաքանչիւր նրկու տողից յետոյ կըկնելով)

Ասա, ինչ վիշտ ունես,
Ի՛նչ հոգս, ցաւ ու տխրութիւն,
Մըտածկոտ տեսք ունես
Պատել է քեզ արտամութիւն:

Մի ամաչիր, ասա,
Շուտով քո վիշտը մեզի.
Տեսնենք ինչ ցաւ է սա,
Որ պաշարել է քեզի:

Այս աշխարհում չը կայ,
Ցաւ ու վիշտ երկարատե.

Ամենայն ինչ կանցնի,

Կը ծագէ քեզ նոր արե:

Միթէ դու չե՞ս լսած՝

Որ կայ այսպիսի առած,

Ով ինչ փափաք ունի—

Նա անպատճառ կը գտնի:

(Ասկետիկ) Այ մարդ, քեզ ի՞նչ է պատահել, որ
սգաւորի նման այդպէս նստել ես. գուցէ աշ-
խարհիս ցաւը քեզ են տուել:

ԱՍԿԵԱՐ.— Միւլէյման, շատ լաւ արիք որ եկար: Ասում
են դու մի շատ խելօք մարդ ես, տեսնենք դու
ինչ խորհուրդ ես տալիս:

ՄԻԻԼԷՅ.— Ուրեմն ինքդ հաւատացած չե՞ս, որ ես խելօք եմ:

ԱՍԿԵԱՐ.— Հաւատում եմ, բայց եթէ դու քո խորհուրդը
տաս, այն ժամանակ աւելի ես կը հաւատամ:

ՄԻԻԼԷՅ.— Դէհ, մի առ մի պատմիր տեսնեմ ի՞նչ է պատահել:

ԱՍԿԵԱՐ.— Ի՞նչ պէտք է պատահի. ես այն եմ մտածում
որ եթէ աշխարհը այսպէս եկել ու այսպէս էլ
գնա, սրա վերջը ի՞նչ է լինելու...

ՄԻԻԼԷՅ.— (Ընդհատելով) Կնց. ուզածդ իմացայ:

ԱՍԿԵԱՐ.— Ի՞նչ է ուզածս:

ՄԻԻԼԷՅ.— Ի հարկէ, որ ուզում ես կի՞ն առնել:

ԱՍԿԵԱՐ.— Բնի. ինչից իմացար:

ՄԻԻԼԷՅ.— Երեսիցդ իմացայ. այդ հասկանալը մի դժւար
բան չէ. հը՛, Ջանան մօրքոյր, այդպէս է թէ ոչ:

ՋԱՆԱՆ.— Ցաւդ տանեմ, ի հարկէ որ այդպէս է:

ՄԻԻԼԷՅ.— (Վէլիին) Այսպէս է, թէ ոչ:

Վ Է Լ Ի.— Ի հարկէ որ այդպէս է, բէկ:

ՄԻԻԼԷՅ.— Հիմի համոզւեցա՞ր, որ խելացի եմ:

ԱՍԿԵԱՐ.— Կիսով չափ համոզւեցի: Բայց բարեկամ, հի-
մայ մի խնդիր էլ կայ: Եթէ դու այդ էլ կարո-
ղացար լուծել, այն ժամանակ կը համոզուեմ,
որ գլխից մինչև ոտքերդ խելք ես:

ՄԻԻԼԷՅՄ.— Դէ, մէկ-մէկ ասա տեսնեմ, լսում եմ:

ԱՍԿԵԱՐ.— Տես Միւլէյման, ես այն համոզմունքին եմ,
որ աղջիկ առնելը ապրանք առնելու պէս մի
բան է. ինչպէս որ ապրանքի լաւն ու վատը
կայ...

ՄԻԻԼԷՅ.— Կնց, իմացայ թէ ինչ է ուզածդ...

ԱՍԿԵԱՐ.— Ուրեմն ի՞նչ է ուզածս.

ՄԻԻԼԷՅ.— Ուզում ես, որ նախ աղջկան տեսնես և յետոյ
առնես:

ԱՍԿԵԱՐ.— (Ձարմացած) Բայց դու ինչպէ՞ս հասկացար:

ՄԻԻԼԷՅ.— Հէնց որ բերանդ բաց արիք. այդտեղ չհասկա-
նալու ի՞նչ կայ: Այդպէս է, թէ ոչ, մօրքո՛ւր:

ՋԱՆԱՆ.— Ցաւդ տանեմ, ի հարկէ որ այդպէս է:

ՄԻԻԼԷՅ.— Այդպէս է՞ թէ ոչ, Վէլի:

Վ Է Լ Ի.— Ճիշտ ես հրամայում, բէկ:

ՄԻԻԼԷՅ.— Հիմի հասկացար, որ գլխից մինչև ոտքերս
խելք եմ:

ԱՍԿԵԱՐ.— Քիչ է մնացել. եթէ մի բան կայ, այն էլ իմա-
նաս, այն ժամանակ հաւատքս կատարեալ կըլինի:

ՄԻԻԼԷՅ.— Մի առ մի ասա, լսենք:

ԱՍԿԵԱՐ.— Շատ լաւ, այ խելօք տղայ: Հիմի ես աղջկան
ինչպէս տեսնեմ, որ կարողանամ համոզուել թէ
նա ինձ օրքան յարմար է:

ՍԻԻԼԷՅ.— Դրանից հեշտ ինչ կայ. շորերդ փոխիր հինը հազիր, չիթ-միթ ինչ որ պատահի առ թևիդ տակ, ձեռքիդ էլ վերցրու մի արշին, յետոյ դռնէ դուռ ընկիր, շրջիր ու արշին մալ ծախիր, և այդպիսով տեսած աղջիկներիցդ մէկն ու մէկը շոկիր, քու կողմից ինձ ուղարկիր, գործը գլուխ բերեմ պրծնի գնահ:

ԱՍԿԵԱՐ.— Զարմանալի միտք է, Աստուածս վկայ:

ԶԱՀԱՆ.— Յաւոյ տանեմ, ի հարկէ որ լաւ միտք է:

ԱՍԿԵԱՐ.— Էլ ուրիշ հնար չկայ. այսպէս է թէ ոչ, մօրքուր:

ԶԱՀԱՆ.— Յաւոյ տանեմ, ի հարկէ որ այդպէս է:

ԱՍԿԵԱՐ.— Խելացի ես, եղբայր, խելացի ես: Աստուած վկայ ասածիդ պէս էլ պէտք է անեմ:

ԶԱՀԱՆ.— Այ Սիւլէյման, ապա դու ինչո՞ւ այդպէս տարիքդ առնում ես ու ինքդ չես ամուսնանում:

ՍԻԻԼԷՅ.— Այդ ես էլ եմ մտածում, ես էլ կամուսնանամ մօրքուր, նախ և առաջ այս մեր Ասկեարին ամուսնացնենք, երևում է շատ է շտապում: Յետոյ ես էլ կամուսնանամ: Է՛, մօրքուր, դ՞ու ինչ ես մտածում:

ԶԱՀԱՆ.— Ոչինչ, ցաւդ տանեմ:

ՍԻԻԼԷՅ.— Ոչ մօրքուր, բնական է որքան դու էլ այրի մնացիր. արի քեզ էլ մի լաւ մարդու տանք, որ մեր կեանքն օրհնող լինի:

ԶԱՀԱՆ.— Վայ ցաւդ տանեմ, իմ ինչ մարդու գնալու ժամանակն է:

ՍԻԻԼԷՅ.— Դեռ շատ երիտասարդ ես, ի հարկէ որ ժամանակդ է: Այնպէս է թէ ոչ. — ի հարկէ, որ այսպէս է: Վէլի, այ տղայ, դէ դու էլ պատրաստիր:

Վ Է Լ Ի.— (Ամաշելով գլուխը քարշ է ցում):

ՍԻԻԼԷՅ.— Հը՞, Ասկեար. ինչ մտաւանջութեան մէջ ընկար:

ԱՍԿԵԱՐ.— Աստուած վկայ էզուցւանից ես արշին մալ ալան եմ դառնալու:

ՍԻԻԼԷՅ.— Եւ շատ լաւ կանես. Աստուած շուտով քեզ նպատակիդ հասցնէ՛ մեզ էլ: Այնպէս է թէ ոչ, մօրքուր:

ԶԱՀԱՆ.— Յաւոյ տանեմ, ի հարկէ որ այդպէս է:

ՍԻԻԼԷՅ.— Այնպէս է թէ ոչ, Վէլի:

Վ Է Լ Ի.— Ծիշտ ես հրամայում, բէկ:

ՍԻԻԼԷՅ.— Ուրեմն այժմ որ այսպէս եղաւ՝ եկէք ինձ մօտ.

Քեզ Աստուած լինի օգնական,

Իմ սիրելի ընկեր Ասկեար.

Ապրիր երկար, միշտ յաւիտեան,

Իմ սիրելի ընկեր Ասկեար:

Խորհուրդիս ուշադիր եղիր,

Իմ սիրելի ընկեր Ասկեար.

Եւ շուտ արա ամուսնացիր,

Իմ թանգագին ընկեր Ասկեար:

Վ Է Լ Ի.—

Քեզի մատաղ աղա Ասկեար,

Էս աղին դու շուտ խօստացիր,

Քեզի մատաղ աղա Ասկեար,

Իէ շտապիր ամուսնացիր,

Կեանքիդ դուրբան, աղա Ասկեար,

Ինձ էլ մի ճանապարհ բացիր:

ՍԻԻԼԷՅ. և Վէլի.— Շատ խելօք գործ կը կատարես

Եթէ մեզի ականջ դնես.

Շուտ շորերդ փոխիր, հոգ չի

Որ նմանուիս արշին մալչի.

Դո՞ւնէ դուռ ընկիր վաճառիք
 Գեղ համար հարսնացու ճարիր.
 Եւ դու դրան կարժանանաս՝
 Եթէ արշին մալչի դառնաս:

(Պար)



ԳՈՐԺՈՂՈՒԹԻՒՆ ԵՐԵՐՈՐԳ

Տեսարանը ներկայացնում է Սուլթան-բէկի տան առաջի պարտէզը. Գիւլջօհրան, Ասեան և Թէլլի նստած են. մէկը կար է անում, իսկ միւսը գուլպա գործում:

1.) Գիւլջօհրա, Ասեա եւ Թէլլի.

ԳԻԻԼՉՕՀՐԱ.—(Կարեցով երգում է)

Ա՛խ Աստուած, հոգս ու ցաւից
 Իմ սրտիկը խաւարեց,
 Աչքիցս լոյսը հեռացաւ
 Սուգն ու շիւան ինձ պատեց:
 Այն օրից անբազաացայ
 Երբ ծնայ, աշխարհ եկայ.
 Աստուած, կամ առ իմ հոգին
 Կամ վերջ տուր իմ ցաւերին...:

ԱՍԵԱ.—Ա՛հ Գիւլջօհրա, քանի դու երգում ես, ես միշտ տխրում եմ:

ԳԻԻԼՉՕՀ.—Երևի իմ երգը քեզ չի դուր գալիս:

ԱՍԵԱ.—Ոչ, ընդհակառակը, ինձ շատ է դուր գալիս, այդ պատճառով էլ ես տխրութեան և մտածմունքի մէջ եմ ընկնում:

ԳԻԻԼՉՕՀ.—Եւ միթէ՞ մեր ամբողջ կեանքը ծայրէ ի ծայր տխրութիւն ու թախիծ չէ՞:

ԱՍԵԱ.—Այո. Աստուած վկայ ճշմարիտ ես ասում:

ԹԷԼԼԻ.—Այ խանութներ, ինչ կայ որ ախ ու վախ էք քաշում: Եթէ տէրը կամենայ, Սուլթան բէկը էսօր էգուց ձեզ կամուսնացնի, կը գնաք տուն ու տեղի և զաւակների տէր կը դառնաք, ու վշտերից կազատուէք:



3132-84

ԳԻՒԼՉՈՂ.—Այ թէլլի, այնպէս, ինչպէս որ մեզ են ամուսնացնում, բոլորովին չամուսնանալը աւելի լաւ է:

ԹԷԼԼԻ.—Ինչո՞ւ, այ խանում, ինչո՞ւ ես այդպէս խօսում:

ԳԻՒԼՉՈՂ.—Աստուած վիայ դրուստ եմ ասում. ես երբէք չեմ կամենում այդ ձևով ամուսնանալ. չես կարող իմանալ թէ քեզ ումն են տալիս. սով է լինելու ամուսինդ. երիտասարդ է, ծեր է, քաջամի է, կաղ է, թակո՞ղ է:

ԱՍԵԱ.—Ուրեմն Գիւլչօհրա, մարդու բնաւ չգնալով ու տանը մնալով թթ՞ն պիտի դառնաս:

ԹԷԼԼԻ.—Աստուած մի արասցէ:

ԳԻՒԼՉՈՂ.—Միթէ՞ ես ասում եմ, որ տանը այնքան մնանք մինչև որ պառակենք... իմ ասածս այն է որ, մարդս մի առաջուց տեսնելու է թէ ո՞ւմ հետ է ամուսնանում: Նայի, տեսնէ կերպարանքին հաւանի ու այնուհետև ամուսնանայ:

ԱՍԵԱ.—(ծիծաղելով) Այնպէս բան ասացիր որ եփած հաւն էլ կը ծիծաղի: Դու այս չորս պատին մէջ ո՞ւմը կարող ես տեսնել, որ դեռ միևնոյն ժամանակ ուզում ես նայել ու հաւանել:

ԳԻՒԼՉՈՂ.—Այդ դէպքում տանը մնալը գերադասելի է:

ԹԷԼԼԻ.—Թող մի ազատ կամենայ ձեզ ամուսնացնել, այն ժամանակ ես կը վազեմ կը գնամ ձեր նշանածներին կը տեսնեմ, տունը տեղին կը նայեմ—յետոյ գալով ձեզ բոլորը կը պատմեմ: (Գիւլչօհրա եւ Ասեա ծիծաղում են):

ԳԻՒԼՉՈՂ.—Լաւ է, այ թէլլի, նշանակում է, որ եթէ մեր փեսացուն գու տեսնես՝ էլ մեր տեսնելուն կարելիք չի մնում:

ԹԷԼԼԻ.—Ո՛չ խանութներ առաջ ես կը տեսնեմ, յետոյ էլ դուք կը տեսնէք:

ԱՍԵԱ.—Լաւ է թէլլի, թող քո ասածը լինի, թող մեզ մարդու տան մնացեալը հեշտ է:

ԳԻՒԼՉՈՂՐԱ.—Ոչ երբէք. ես առանց տեսնելու և հաւանելու երբէք չեմ ամուսնանայ: Բայց դուք առանց տեսնելու պատրաստ էք ամուսնանալու:

ԹԷԼԼԻ.—Աստուած վիայ, խանում, առանց տեսնելու ամուսնանալը լաւ է, քան տեսնելով ամուսնանալը, որովհետև երբ չտեսած ամուսնանում ես, սիրտդ թփրտում է որ ժամ առաջ տեսնես: Իեզ փառաւոր կը զուգեն ու կը հագցնեն, Ֆայետօն կը նստացնեն ու Ալլահ, Ալլահ ազագակելով կը տանեն, ոտներին տակ մատաղ էլ կը մորթեն: Յետոյ սենեակ տանելով անկիւնում կը բազմացնեն: Սիրտդ թփրտում է. նայում ես. մէկ էլ յանկարծ դուրը բացւում է ու երիտասարդ փեսացուն մտնում... (Այս միջոցին դուրը բացւում է եւ Սուլթանն քէկը երեսում: Աղջկերը իսկոյն լոռում են եւ իրանց գործերով զբաղւում): Աստուած մի արասցէ որ այսպիսի փեսացու լինի:

2.) Նոյնը եւ Սուլթանն քէկ

ՍՈՒԼԹԱՆ ԲԷԿ.—Ազջի թէլլի, հազար անգամ պատուիրել եմ քեզ, որ պառկելիս գաս վրաս ծածկես, հիմի բաց եմ պառկել ու մէջքս մրսել է: Է՛հ եթէ հանդուցեալ Սօնաս կենդանի լինէր... էս մե՛նակութիւնն էլ մի բանի նման չէ:

ԳԻՒԼՁՕՂ.— Հայրիկ, մենք չգիտէինք. եթէ մեզ ասէիք, մենք կը ծածկէինք:

ՍՈՒԼԹԱՆ Բ.— Ձէք ասում. դէ, արդէն անց է կացել. (Կոտրատելով) դէ, վեր կացէք ներս գնացէք. ես էլ քաղաք եմ գնալու. դէ, գնացէք ու տանը հսկեցէք: (Աղջկերք ներս են գնում):

3.) Սուլթանն ըէկ. (միայնակ)

Չի լինում. միայնակութիւնը ինձ բոլորովին ձեռնտու չէ. հինգ տարի է, որ օր օրի վրայ յետ եմ գնում. երկու օր առաջ բժիշկ Միրզա Հիւսէինին ասում եմ՝ այս տեղս է ցաւում, այս կողմս է ցաւում. ասում է մի կին առ. ո՛ր էր: Եթէ միայնակութի կին պատահէր՝ կ'առնէի: Իհարկէ ինձ աղջիկ չեն տայ, որովհետեւ տարիքս շատ է իսկ փոքս քիչ. հայհույով ու հրացանաձգութեամբ հարսանիք կատարելը ինձ պատշաճ չէ: Ինձ պէտք է մի տարիքով այրի կին, որ մի մօլլայով, մի զլուխ էլ շաքարով գործս վերջանայ. այնուհետեւ կինս կսկսի գիշերները միբուքիս հինա գնել, ու առաւօտներն էլ կը լւանայ. պառկելիս էլ մէջքս չի մըսի...էհ. բազար գնամ տեսնեմ ինչ կայ չի կայ... (Գնում է):

4.) Ասկեար (ընտրի և տելից)

Արշին մալ ալան

Արշին մալ ալան (երեք անգամ)

Բաֆթա, թաֆթա, բողչա, հէյ

(Մտնում է թելի տակ արշին մալ, իսկ ձեռքին արշին)

Ահա ամբողջ երեք օր է որ դռնէ դուռ շրջում

եմ, բայց վնասածս չեմ գտնում: Այս օրն էլ անցաւ, տեսնեմ ինչ է լինելու: Ո՛վ բաղդ, դու ինձ հասիր...

(Կրկին երգում է երեք անգամ)

Արշին մալ ալան...

Բաֆթա, թաֆթա, բողչա, հէյ...

5.) Գիւլչօհրա Ասես եւ Թէլի

ԳԻՒԼՁ.— }
ԱՍԵՍ.— } (Միասին) Արշին մալչի, արշին մալչի. այս-
Թէլի.— } տեղ արի:

ԱՍԿԵԱՐ.— (Մօտենալով) Կարծես աղջիկներ ի հանքն եմ ընկել, երեքը միասին դուրս եկան. տեսնենք ինչպիսի բաներ են: Ասացէք տեսնեմ, գեղեցիկ խանութներ, ինչ էք կամենում, չիթ, մետաքս, բաֆթա, ամեն բան ունեմ:

ԳԻՒԼՁ.— Բաց արա տեսնենք, մեզ համար ինչ կայ:

ԱՍԿԵԱՐ.— Այս բոլէիս, խանում:

ԱՍԵՍ.— Գեաինը մտածը ինչ սիրուն տղայ է:

ԱՍԿԵԱՐ.— (Ուշադրով նայելով Գիւլչօհրային նայելով) Տես խանում, ինչ սիրտդ ուզէ, բոլորը այստեղ կայ... (մնկուսի) բայց ինչ հրաշալի աղջիկ է:

Թէլի.— Այ, խանում, այն վարտիկացուն ինչ լաւն է:

ԱՍԵՍ.— Ահ, այդ ինչ բանի պէտք է...

ԳԻՒԼՁ.— Գուցէ քեզ համար անպէտք է, բայց Թէլիի համար պէտքահան է:

ԱՍԿԵԱՐ.— Ճիշտ ես հրամայում, խանում: (մնկուսի) Խելացի աղջիկ է, հա: Ուրեմն քանի արշին հրամայում էք կարել ազախնու համար:

ԳԻՒԼՉՕՂ.—Ինչ արժէ արշինը:

ԱՍԿԵԱՐ.—Տասն երկու կողէկ արժէ, բայց ձեզ համար տասը կողէկից կը հաշուեմ:

ԳԻՒԼՉ.—Մենք այս տեսակ չիթերի արշինը միշտ ութ կողէկով ենք առնում. դու էլ եթէ կտաս՝ տասն արշին կտրիր:

ԱՍԿԵԱՐ.—Ոչինչ, թող ձեզ մատաղ լինի. (չափելով) մէկ, երկու, (մեկուսի) կարծես փնտրածս գտել եմ... երեք, չորս... Աստուածս վկայ շատ սիրուն աղջիկ է... հինգ, վեց, եօթը, կարծես հէնց իմ բախտը այս պէտք է լինի... ութը, ինը... երևի ինչպէս երեսն է, այնպէս էլ սիրտը պէտք է որ գեղեցիկ լինի... տասը, տասնմէկ, տասներկու...

ԳԻՒԼՉ.—Տասն արշին բաւական է:

ԱՍԿԵԱՐ.—Ահ, մոռացել էի. այս է, տասն արշին է. (կտրում աղախնուն է տալիս)

ԱՍԵԱ.—Մեզ յարմար ոչինչ չունես:

ԱՍԿԵԱՐ.—Խանում, ձեզ վայել բաներ էլ շատ ունեմ, միայն տանն է. միւս անգամ գալիս կը բերեմ: (Գիւլջօհրան փող է տալիս.) Քո ձեռքիդ բարաքեաթն էլ ինձ բաւական է:

ԳԻՒԼՉՕՂ.—Ինչից իմացար, որ ձեռքս բարաքաթով է:

ԱՍԿԵԱՐ.—Այնպէս, սիրտս վկայում է, որ ձեռքդ բարաքեաթով է: (մեկուսի) Աստուած վկայ, հէնց իմ ուզածն այս է: Խանում, Սուլթան բէկի տունը միթէ՞ այս չէ:

ԳԻՒԼՉՕՂ.—Հէնց նա է:

ԱՍԿԵԱՐ.—Աստուած հաստատ պահէ: Հապա Սուլթան բէկի աղջիկը որն է:

ԱՍԵԱ.—Հէնց սա ինքն է:

ԱՍԿԵԱՐ.—Աստուած կեանք տայ: (մեկուսի) Շատ գեղեղեցիկ աղջիկ է:

ԱՍԵԱ.—Գիւլջօհրա, դէ, առն գնանք. թէ չէ հօրեղբայրս կը գայ կը բարկանայ (գնում նն):

ԱՍԿԵԱՐ.—Ողջ ու շէն կենար:

ԳԻՒԼՉՕՂ.—(Գնալով) Դու էլ ողջ եղիր:

6.) Ասկեար (մենակ)

Ճշմարիտ խօսելով, ես սրանից գեղեցիկ աղջիկ չեմ տեսել, և կարող է պատահել, որ այսուհետև էլ չտեսնեմ: Ասկեար, արի, ես բաղդ ասա ու սրան առ: Թէև Սուլթան բէկը ինձ չէ տեսած, բայց անունս լսած կըլինի: Գիտէ որ հարուստ վաճառական եմ, և եթէ աղջիկն ուզեմ՝ կըտայ: Իսկ եթէ աղջիկն իմանայ, որ ես իսկապէս արշին մալ ծախող եմ, ինձ կուզէ. ի հարկէ եթէ խելացի աղջիկ է՝ կուզէ:

Կարծես գտայ սէրը սրտիս (կրկնել)

Մխիթարանքս իմ ցաւերիս,

Այսուհետև կուզեմ ապրել,

Երբոր գտայ ընկեր կեանքիս: (կրկնել)

Բայց Սուլթան բէկը եթէ իմանայ, որ ես արշին մալ ծախող եմ, հազար տարի էլ մնայ, աղջիկն ինձ չի տայ: Երանի աղջիկը մի անգամ էլ դուրս գար, տեսնէի ու խօսեցնէի: Կայ տեսնեմ. (ղրնից նայում է) կարծես եկող կայ. թագնեմ, տեսնեմ ո՞վ է: (Թագնում է)

7.) Յոյնք եւ Գիւլջօհրա

ԳԻՒԼՉՕՂ.—Ասեան ասում էր որ արշին մայլի տեսքը շատ գեղեցիկ է: Եթէ Ասեային ասենք թէ արի քեզ նրան տանք—մի անագին աղմուկ կը բարձրացնէ, ասելով՝ միթէ՞ նա իմ զոյգն է: Բայց իմ կարծիքով արշին մայլի լինելը մի վատ բան բան չէ. նա էլ վաճառականի նման մի բան է: Աստուած վկայ, եթէ հայրս համաձայնուի, ես նրա հետ էլ կամուսնանամ. որքան էլ չլինի, ես նրա յերեսը տեսած եմ, գիտեմ որ կազ չէ, կոյր չէ, քաչալ չէ, ծեր չէ, գէմքն էլ ինձ դուր եկաւ. եթէ նրան լաւ հագցնես, մի բէկի սողի նման գեղեցիկ տղայ կը դառնայ. ինձ ասաց թէ ձեռքդ բարաքեաթով է. և նա ինձ ինչպէս էր նայում... ան, ինչեր եմ խօսում. գուցէ նա կին, երեխաներ ունի:

ԱՍԿԵԱՐ.—(Նրեալով) Ներիք խանում...

ԳԻՒԼՉՕՂ.—(Ցնցելով) Ա՛ն, ինչպէս վախեցայ...

ԱՍԿԵԱՐ.—Կարծեմ ես արշինս այստեղ եմ մոռացել...

ԳԻՒԼՉՕՂ.—Եթէ մնար, այստեղ կըլինէր:

ԱՍԿԵԱՐ.—Վնաս չունի, տանը ուրիշ արշին էլ ունեմ...

ԳԻՒԼՉՕՂ.—(Մեկուսի) Կրկին ինձ է նայում. նայւաքը նայւաքիս հանգիպելիս կարծես կայծակնահար եմ լինում:

ԱՍԿԵԱՐ.—Խանում, երանի Սուլթան բէկը քեզ նման տասներկու աղջիկ ունենար:

ԳԻՒԼՉՕՂ.—Դրանով ինչ ես ուզում ասել:

ԱՍԿԵԱՐ.—Այն եմ կամենում ասել, որ մէկ աղջիկը բէ-

կի, մէկը խանի, մէկը վաճառականի, մէկը մօլլայի, մէկը սէյիդի տալով վերջի մնացածն էլ ինձ կը տար:

ԳԻՒԼՉՕՂ.—Լաւ կը լինէր:

ԱՍԿԵԱՐ.—Բայց ո՛չ չի տար. ի հարկէ չի տար. նա մի բէկ է, իսկ ես՝ արշին մայլի: Նա ինձ աղջիկ չի տար... և եթէ նա տալու էլ լինի՝ աղջիկը չի գնայ:

ԳԻՒԼՉՕՂ.—Երևի դու ամուրի ես:

ԱՍԿԵԱՐ.—Կատարելապէս ամուրի եմ, բայց Աստուծոյ տւածից գործս շատ յաջող է գնում, մի կտոր հաց ունեմ:

ԳԻՒԼՉՕՂ.—Ուրեմն ինչո՞ւ մինչև հիմի չես ամուսնացել:

ԱՍԿԵԱՐ.—Ի՞նչպէս ամուսնանամ. չտեսած աղջկանս չեմ կարող առնել, իսկ իմ անսածներեց էլ այնպիսի մէկին եմ հաւանել որ նրան էլ ինձ չեն տայ:

ԳԻՒԼՉՕՂ.—Աղջիկը ինքը քեզ չի՞ ուզի:

ԱՍԿԵԱՐ.—Չեմ կարծում որ ուզի, որովհետև նա բէկի աղջիկ է:

ԳԻՒԼՉՕՂ.—Դու նախ աղջկան հարցրու, յետոյ այդպէս խօսիր: Ինչից գիտես որ չի ուզի:

ԱՍԿԵԱՐ.—Ճիշտ ես հրամայում, խանում, եթէ այդպէս է, ասա տեսնեմ. ինձ հետ կամուսնանաս:

ԳԻՒԼՉՕՂ.—(Չարմացած) Ո՞վ. ես...

ԱՍԿԵԱՐ.—Այո՛. դու, իմ հաւանած աղջիկը միմիայն դու ես:

ԳԻՒԼՉՕՂ.—Իսկ ես կարծել էի թէ ուրիշ աղջիկ է...

ԱՍԿԵԱՐ.—Բացի քեզնից ուրիշը չէ կարող լինել:

ԳԻԻԼՉՕՂ.—Ուրեմն դու ինձ մի անգամ տեսնելով հաւանեցա՞ր:

ԱՍԿԵԱՐ.— Ի հարկէ, խանութ: Աչքը տեսաւ, սիրտը սիրեց, քեզ տեսած ըստէիցս սիրտս իր հրճուանքից սկսեց բարախել:

Սովորելով փորձուցի	} կրկնել
Ամենքից ծաղրուեցի	
Յաւ ու տանջանք շատ տարայ,	
Բայց վերջապէս քեզ գտայ:	

Այնպէս սիրեցի, այնպէս սիրեցի,
այնպէս սիրեցի իմ հոգի,
Որ առանց քեզ չեմ ապրի:

ԳԻԻԼՉՕՂ.— Ոչ ոքի չէի տեսնում,
Գաղտնիքս չէի ասում.
Ի՞նչ է սէր, չը գիտէի,
Քեզ տեսնելով սիրեցի:
Այնպէս սիրեցի, այնպէս սիրեցի, և այլն:

ՄԻԱՍԻՆ.— Ա՛հ, մեր բաղդը մեզ օգնեց,
ես ինձ թշուառ կարծեցի,
Բայց ինձ կեանքը ողջունեց՝
Քեզ տեսնելով սիրեցի:
Այնպէս սիրեցի, այնպէս սիրեցի, և այլն:

ԳԻԻԼՉ.— (մեկուսի) Աստուած վկայ ինձ էլ միևնոյն բանը պատահեց. (նրան) բայց հայրս ինձ քեզ չի տայ:

ԱՍԿԵԱՐ.— Գիտեմ որ չի տայ, դու ինքդ էլ չես կամենայ:

ԳԻԻԼՉ.— Ո՞րտեղից գիտես որ չեմ կամենայ:

ԱՍԿԵԱՐ.— Դ՞նու ով՝—ես ով...

ԳԻԻԼՉ.— (Ամաչելով) Դու էլ մարդ ես, ես էլ. ես էլ քեզ եմ հաւանել:

ԱՍԿԵԱՐ.— (Երգում է իւրաքանչիւր նրկու տողից յետոյ կրկնել)

Եթէ այդպէս է, խանութ
Ուրիշին ինչ եմ անում.
Քեզ եմ միայն ես սիրել,
Քո սիրով յափշտակել:

ԳԻԻԼՉ.— Միթէ՞ դու ինձ ես սիրում
Ուրիշին էի ես կարծում,
Եթէ այդպէս է միանանք
Եւ շուտով ամուսնանանք:

ԱՍԿԵԱՐ.— (Մեկուսի) Այս շատ զարմանալի բան եղաւ.
(նրան) խանութ, ես քեզ յարմար գոյգ չեմ:

ԳԻԻԼՉ.— Չգիտեմ, բայց քեզ շատ եմ հաւանել:

ԱՍԿԵԱՐ.— Խանութ, երեւի ճիշտ է ասած որ սիրտը սրբտին է քաշում:

ԳԻԻԼՉ.— Ինձ խանութ մի ասի. անուշա Գիւլչօճրա է:

ԱՍԿԵԱՐ.— Գիւլչօճրան, ուրեմն ինչպէս անենք որ հայրդ քեզ ինձ տայ:

ԳԻԻԼՉ.— Ինձ հօրիցս ինչդրիր. տւեց լաւ, եթէ չտւեց՝ այն ժամանակ ես իմ կամքովս քեզ հետ կամուսնանամ:

ԱՍԿԵԱՐ.— (Մեկուսի) Շատ զարմանալի է. (նրան) բայց հայրդ քեզ բռնի կամուսնայնի:

ԳԻԻԼՉ.— Բռնութեամբ ես չեմ ամուսնանայ:

ԱՍԿԵԱՐ.— Քեզ բռնի կը տանեն:

ԳԻԻԼՉ.— Ինքս ինձ կը խեղդեմ:

ԱՍԿԵԱՐ.— Աստուած մի արասցէ: Հիմի որ գործը այստեղ հասաւ, թող մի լաւ խորհիւնք գուցէ մի դար-

ման անենք: Հիմի դու տուն գնայ, թէ չէ մեզ միասին կը տեսնեն. մնաս բարեան:

ԳԻԻԼԶ.— Գնաս բարեան. բայց լաւ իմացիր, որ խօսքս խօսք է: (գնում է)

8.) Ասկեար (առանձին)

Աղջիկը ինձ հաւանել է, բայց ափսոս որ չգիտէ թէ ես մի հարուստ վաճառական եմ: Ինքս էլ դիտմամբ այդ բանը աղջկան չյայտնեցի, որպէսզի աղջկան փորձեմ: Հիմի գնամ մի պատճառով մօրքուրիս էլ այստեղ զրկեմ, թող տեսնէ թէ ես ինչպիսի աղջիկ եմ ընտրել: (Գնում է):

9.) Գիւլչօհրա, յետոյ Ասեա եւ Թէլլի.

ԳԻԻԼԶՉՉՐԱ.— (Մտնում է դէս ու դէն նայում եւ յետոյ մտածկոտ նստում):

Այս ինչ արեցի. մի օտար տղի այնպիսի բաներ ասացի, որ աղջկայ համար անվայել է... չգիտեմ որտեղից լոյս ընկաւ. ինքը լաւ, խօսքերը քաղցր... երբէք մտքիցս չէ հեռանում... ան, թշուառ սիրտս շատ է տանջում:

Որտեղից էր ինձ պատահեց
Արշին մալ ալան,

Սիրտս կրակով նա դաղեց
Տանջում եմ:

Ինքը լաւ, քաղցրը խօսքերը
Արշին մալ ալան,

Սիրեցի աչք ու յօնքերը
Տանջում եմ:

ԱՍԵԱ.— } (միասին) Այս ինչ յուսահատութիւն,
Թէլլի.— } Գիւլչօհրա, Գիւլչօհրա,

Քեզ պատել է տխրութիւն,

Շուտ ասան, շուտ ասան,

Այդ ինչ կերպարանք է սա,

Գիւլչօհրա, շուտ ասան, } 2

Գիւլչօհրա, շուտ ասա:

Աղջկան անպատշաճ է,

Որ տըխրի, մտածէ,

Ցաւիդ պատճառը ասան,

Գիւլչօհրա, շուտ ասան, } 2

Գիւլչօհրա, շուտ ասա:

(Վերջին տունը նորից կրկնել. Աղջկերքը հեռանում են).

10.) Ասկեար, Ջահան

ԱՍԿԵԱՐ.— Տես, մօրքուր, աղջիկը հէնց այս տանն է բռնակում, այս կտորը կը տանես և կասես որ արշին մալչին զրկեց. եթէ ով լինելդ հարցնող լինի, կասես թէ արշին մալչու մօրքուրն եմ, հասկացար:

ՋԱՀԱՆ.— Հասկացայ, մօրքուրըդ քեզ մատաղ, գնում եմ: (Ներս է մտնում):

ԱՍԿԵԱՐ.— Հետզհետէ աղջկան աւելի ու աւելի եմ սիրահարում: Հէնց այսօր Սիւլէյմանին պէտք է տեսնեմ և ուղարկեմ որ գնայ ու միջնորդութիւն անէ: Այսպէս ուրեմն, ուղածս գտայ: Այս տունը, այս բակը, այս ճանապարհը, այս բոլորը կարծես երեսիս ժպտում են:

Վերջապէս գտայ իմ փնտրածը,
 Գիշեր ու ցերեկ իմ երազածը,
 Եթէ նրան ինձի պարգևէ բաղդը,
 Կըլնեմ աշխարհի երջանիկ մարդը:
 Եկ, եկ, գողարիկ աղջիկ,
 Եկ, եկ, իմ անուշիկ,
 Էլ չունեմ ես ախ-վախ
 Կեանքս քեզ մատաղ:

Լաւերից լաւըն է իմ սրտիս ընտրած,
 Կարծես հըրեշտակ է—ոչ արարած.
 Ազնիւ է սրտով ու հասուն, խելացի,
 Միակն աշխարհում, այն որ ընտրեցի:
 Եկ, եկ, գողարիկ աղջիկ, և այն:

Այժմ այլևս աւելորդ է այստեղ մնալը: Տուն
 գնամ, մօրբորջս գալուն սպասեմ, տեսնեմ ինչ
 լուր է բերելու: (Գնում է):

11.) Սուլթան-բէկ (Առանձին)

Հէնց ամենքն էլ իմ ասածն են կրկնում. թէ
 ինձ պէտք է հասակաւոր մի կին՝ որ մի մոլլայով
 ու մի գլուխ շաքարով գործը գլուխ գայ: Հիմի
 ինչպէս անեմ: Ո՞րտեղից մի այգպիսի կին գըտ-
 նեմ: Աբի, այ կին. եկ, եկ, որտե՞ղ ես: (Հէնց
 այս միջոցին Ջահան դուրս է գալիս և ուզում է
 զնայ:)

12.) Նոյն և Ջահան

ՍՈՒԼԹ.-Բէկ.—(Չարիազանց զարմացած). Այս ի՞նչ է.
 արդեօք աչքիս է երևում... ոչ սա կին է և ին-

քըն էլ նոր մեր տնից դուրս եկաւ: Կարծես Աս-
 տուած իմը ինձ հասցրեց: (Շրտ կողմը զնայով)
 Գոյրիկ, սով ես և ի՞նչ գործ ունես մեր տանը:
 ՋԱՀԱՆ.—Արշին մալ էի տարել աղջկերանց ցոյց տալու:
 ՍՈՒԼԹ.-Բ.—(Մեկուսի), Կին լինելը կին է. միայն վատ
 չէր լինի, եթէ երեսը կարողանայի տեսնել: Շատ
 լաւ քոյրիկ, բայց գուցէ դու չաղբում փաթաթ-
 ուած մի սղամարդ ես:

ՋԱՀԱՆ.—Ա՛յ եղբայր, դու այդ ի՞նչ խօսք ես ասում:
 ՍՈՒԼԹ.-Բ.—Եթէ այգպէս է, մի քիչ երեսդ ինձ ցոյց
 տուր, որ մօտիկութիւն ատաջ գայ մեր մէջ:
 ՋԱՀԱՆ.—(Երեսը քոյրույթիս լսանալով) Տեսա՞ր որ ես
 կին եմ:

ՍՈՒԼԹ.-Բ.—Այն, տեսայ, (Վեկուսի) կին է, և ինքն էլ
 շատ լաւ տեսակից. բայց մի ինձ հասկացրու
 տեսնեմ, դու սով ես. ինչպե՞ս ես, ո՞ւմ կի՞նն ես:

ՋԱՀԱՆ.—Ես արշին մալչու մօրաքոյրն եմ, և ինքս էլ
 կանանց ու աղջիկներին ապրանք եմ ծախում:
 ՍՈՒԼԹ.-Բ.—Լաւ, բայց շատեցիր թէ ո՞ւմ կի՞նն ես.

ՋԱՀԱՆ.—Ես դալալ քէրբալայ Նասիրի կի՞նն եմ. գուցէ
 կը ճանաչես:

ՍՈՒԼԹ.-Բ. Ոչ. չեմ ճանաչում. ես դալալի հետ գործ
 չունեմ: Լաւ ուրեմն մարդդ դալալութիւն է ա-
 նում, իսկ ինքդ էլ արշին մալ ես ծախում:

ՋԱՀԱՆ.—Այն, մարդս դալալութիւն անում էր:
 ՍՈՒԼԹ.-Բ.—Անում էր. հիմի ի՞նչ գործ է անում:

ՋԱՀԱՆ.—Հիմայ Աստուած գիտէ թէ ինչ գործ է անում.
 տասներկու տարի է որ հանգուցեալը մեռել է:

ՍՈՒԼԹ.-Բ.—Մեռել է, նշանանկում է դու այրի ես:

ՁԱՀԱՆ.—Այո, այրի եմ:

ՍՈՒԼԹ.—Բ.—Այդպէս ասա էլի: Ձէ որ ես էլ եմ այրի:
(Հագում է և իրեն ուղղում): Ուրեմն ասում ես
որ 12 տարի է մարդդ մեռել է և դու այրի ես
մնացել. լաւ, հիմա ինչպէս անենք:

ՁԱՀԱՆ.—Ի՞նչը ինչպէս անենք:

ՍՈՒԼԹ.—Բ.—Ես այն եմ ասում, որ իմ կինս էլ 5 տարի
է վախճանուած է: Շատ վատ է այսպէս մնալը,
մարդ առանձնութեան մէջ ինչ անելը չէ իմա-
նում: (Մեկուսի), լաւ ձեռքս է ընկել, պէտք չէ
սրան բաց թողնել: (Ջահան ուղղում է գնալ):
Մի կաց է, ո՞ւր ես այդպէս շտապում:

ՁԱՀԱՆ.—Շտապում եմ. գործ ունեմ:

ՍՈՒԼԹ.—Բ.—Սրանից լաւ էլ ի՞նչ գործ: Դու այրի, ես
այրի. մեր ցաւերը միմեանց պատմենք: Լաւ,
ուրեմն հիմի դու ասում ես որ այրի ես:

ՁԱՀԱՆ.—Այո, ասացի որ ամուսինս տասներկու տարի է
մեռել է:

ՍՈՒԼԹ.—Բ.—Բանը նրանումն է որ ես էլ եմ այրի:

ՁԱՀԱՆ.—Ինչ արած, Աստուծոյ կամքն է. մենակ դու
չես:

ՍՈՒԼԹ.—Բ.—Այդ գիտեմ որ այդպէս է. բայց արի մենք
երկուսս էլ մի բան անենք:

ՁԱՀԱՆ.—Ի՞նչ բան:

ՍՈՒԼԹ.—Բ.—Մի այնպիսի բան, որ ոչ դու այրի մնաս և
ոչ ես:

ՁԱՀԱՆ.—Այդ ի՞նչպէս անենք:

ՍՈՒԼԹ.—Բ.—Էլ ինչպէս պիտի լինի. մի հատ մոլլա, մի
գլուխ շաքար, գործը կը վերջանայ:

ՁԱՀԱՆ.—Ձեմ հասկանում թէ ինչ ես ասում:

ՍՈՒԼԹ.—Բ.—Ձեա հասկանում. զարմանալի դիւ բիւմազն ես
եղել. բա որ այդպէս է, ուրեմն լսի՛ր թէ ի՞նչ եմ
ասում, այ դիւ բիւմազ:

Մի ձի հեծայ, աշխարհ ընկայ, եկ առնեմ,
դիւ բիւմազ.

Վերջի վերջոյ քեզի գտայ, մարալըս, դիւ
բիւմազ:

Դու ես ինձ յարմար,

Յօնքերդ կամար,

Եկ առնեմ, դիւ բիւմազ:

Տուն կառուցի քարի վրայ, եկ առնեմ դիւ
բիւմազ.

Ինչ որ ասես՝ գլխիս վրայ, մարալըս դիւ
բիւմազ.

Դու ես ինձ յարմար,

Յօնքերդ կամար,

Եկ առնեմ, դիւ բիւմազ:

Դու այրի, ես այրի, դու եկ ինձ սիրի, դիւ
բիւմազ,

Ես ինչ ասեմ, դու ինձ լսի, մարալըս, դիւ
բիւմազ:

Դու ես ինձ յարմար, և այլն. (կրկնել)

9.) Նոյնի և Ասկեսար

ԱՍԿԵՍԱՐ.—Այս ինչ զարմանալի բան է. (ստուջ գալով)
բէկ, այ բէկ. սպասիր խօսք ասեմ. այդ լաւ
բան չես անում, որ ուրիշի կնոջ սիրահարական
երգեր ես երգում.

ՍՈՒԼԹ.-Բ.—Քեզ ի՞նչ, դ՞ու ով ես.
 ԱՍԿԵՍՐ.—Ինչէս թէ ինձ ինչ. չէ որ սա իմ մօրքոյրն է:
 ՍՈՒԼԹ.-Բ.—Մօրքոյրդ է: Նշանակում է արշին մալչին
 դու ես:
 ԱՍԿԵՍՐ.—Այո, ես եմ:
 ՍՈՒԼԹ.-Բ.—Շատ լաւ, շատ բարի: Բայց դու շատ ան-
 գութ մարդ ես:
 ԱՍԿԵՍՐ.— Ի՞նչ է եղել:
 ՍՈՒԼԹ.-Բ.—Ինչ պէտք է լինի, այն, որ դու այս խեղճ
 կնոջ 12 տարի այրի պահել, մարդու չես տւել:
 ԱՍԿԵՍՐ.—(Ժպտալով) Ի՞նչ անեմ, մի լաւ մարդ չեմ
 գտնում:
 ՍՈՒԼԹ.-Բ.—Լաւ մարդ ես ուզում.—էս: Արի էլի, արի
 ազգական դառնանք. ես էլ այրի եմ:
 ԱՍԿԵՍՐ.— Բէկ, ճիշտ ես ասում թէ՛ հանաք ես անում:
 ՍՈՒԼԹ.-Բ.—Ճիշտ, բոլորովին սրտանց եմ ասում:
 ԱՍԿԵՍՐ.—Լաւ բէկ, դիցուք ես իմ մօրքրոջս քեզ տուի.
 Իսկ դ՞ու ինձ ինչ ես տալիս:
 ՍՈՒԼԹ.-Բ.— Ի՞նչ պէտք է տամ. քո օգուտը այն կը լինի,
 որ ինձ նման բէկի հետ ազգական ես դառնում.
 մօրքրոջդ օգուտը այն կը լինի՝ որ հանգիստ
 կապրի: Սրանից աւել էլ ի՞նչ ես ուզում:
 ԱՍԿԵՍՐ.—Ոչ, բէկ. այդ բոլորը բաւական չէ:
 ՍՈՒԼԹ.-Բ.—Ուրեմն ի՞նչ է քո ուզածը:
 ԱՍԿԵՍՐ.—Բէկ, դու ինձ հետ ուզում ես ազգական լի-
 նել, արի երկու կողմից ազգական դառնանք:
 ՍՈՒԼԹ.-Բ.—Իսչպէս թէ երկու կողմից...
 ԱՍԿԵՍՐ.—Ահա այսպէս. ես իմ մօրքոյրս քեզ կըտամ,
 դու էլ աղջիկդ ինձ տուր:

ՍՈՒԼԹ.-Բ.—(Բարկացած) Յիմարի տղայ յիմար. ի՞նչ ես
 տուտուց տուտուց դուրս տալիս. ես, բէկի
 տղայ, իմ աղջիկս արշին մալչու պէտք է տամ.
 գնահ կորիւր այստեղից, դու էլ, քո մօրքուրն էլ.
 տխմարազլուխ. քեզ մի այնպիսի ապտակ կը
 տամ, որ ատամներդ բերանդ կըթափւի:
 ԱՍԿԵՍՐ.—Արի գնանք. մօրաքոյր: (Գնալով մեկուսի)
 Արշին մալչի Ասկեարին աղջիկ չուեց, բայց
 վաճառական Ասկեարին աղջիկը կը տայ:
 ՍՈՒԼԹ.-Բ.—(Տան դռներին մօտիկ դէպի գնացողները)
 Տես ինչ տխմար լսկոտ է, որ իր այրի մօրա-
 քրոջ փոխարէն իմ աղջիկս է ուզում. յիմար:
 (Մտածկոտ) Ոչ, ո՛չ. ես բազդ չունեմ: Կինը
 երկնքից ընկածի նման ձեռքումս էր. ինքն էլ
 ճիշտ իմ ուզածը. գործը զլուխ բերելու համար
 մնում էր մի հատիկ մոլլա, և մի զլուխ շաքար.
 բայց այդ պատիժ պատուհասը ճրտեղից սրտեղ
 լոյս ընկաւ ու գործս փչացրեց: Ախ, ախ...
 Ինչ վատ եղաւ իմ վիճակս, եկ առնեմ,
 դիլ բիւմազ.
 Ձեռքից գնաց սիրահարըս, եկ առնեմ,
 դիլ բիւմազ:
 Դու ես ինձ յարմար, կայլն:

ՎԱՐՄԱՆՈՅՐ

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ

Տեսարանը ներկայացնում է Սուլթան բէկի տանը կահաւորուած մի սենեակէ

7.) Գիւլչօհրա (առանձին)

Ես մի լացող սոխակ զարձայ
Ձրկուած քո վարդ երեսից,
Ես մի համբը թութակ զարձայ
Ձրկուած քո քաղցը խօսքերից:

Մտածում էի համբերել
Բաժանուած քո տեսութիւնից,
Սըրտիս ստիպեցի լսել
Հուռ տառապել քո կարօտից:

2.) Նոյն եւ Ասես

ԱՍԵՍ.— Ինչ է պատահել քեզ, Գիւլչօհրա, ի սէր Աստու-
ծոյ ասա. այս քանի օր է ինչ յուսահատ ես
երևում:

ԳԻԻԼԶ.— Աստուած վկայ ինքս էլ չգիտեմ: Գուցէ հի-
ւանդ եմ:

ԱՍԵՍ.— Բայց չէ որ հիւանդի մի որ և է տեղը կը ցաւի.
Փառք Աստուծոյ, երևում է որ քո ոչ մի տեղդ
էլ չի ցաւում:

ԳԻԻԼԶ.— Ի դուր ես հարցուփորձ անում, ի սէր Աստու-
ծոյ հանգիստ թող ինձ:

ԱՍԵՍ.— Ոչ Գիւլչօհրա, այս քանի օր է, որ դու բոլորո-
վին փոխուած ես. հիւանդ չես. ուրեմն այստեղ
մի պատճառ կայ... աղջի. գուցէ մէկի վրայ
սիրահարուած ես:

ԳԻԻԼԶ.— Ո՛ւմ վրայ պէտք է սիրահարւեմ:

ԱՍԵՍ.— Ոչ, ո՛չ, կարմրեցար. անշուշտ մի երիտասարդի
վրայ սիրահարուել ես: Արդեօք սիվ է այդ երի-
տասարդը: Մեզ մօտ բացի արշին մալչուց ու-
րիշ մարդ չէ եղել. երևի այդ լակոտի վրայ ես
սիրահարուել:

ԳԻԻԼԶ.— Ինչո՞ւ լակոտ լինի:

ԱՍԵՍ.— Ա՛, իմացոյ. արշին մալչուն աչք ունես: Աղջի.
միթէ՞ նա քեզ յարմար գոյգ է: Դու բէկի զա-
ւակ, բէկի աղջիկ, յանկարծ մի լակոտի վրայ
սիրահարուում ես.— Աստուած վկայ, եթէ ճրագի
պէս էլ լոյս տալիս լինի, դարձեալ ոչ մի կա-
րևորութիւն չեմ տայ նրան: Նա ով՞—ես սիվ:

ԳԻԻԼԶ.— Աստուած վկայ, ինքս էլ չգիտեմ թէ ինձ ինչ
է պատահել: (Լայով երեսը ծածկում է ձեռքերով)

ԱՍԵՍ.— (Երատուհան) Դու հասած աղջիկ ես. այդ մըտ-
քերը զլիւիցդ հանիր. դու սիվ—այդ փողոցի լա-
կոտը սիվ: Գոնէ մի քեզ յարմար մարդու վրայ
էլ սիրահարուէիր: Տես. ես էլ քեզ նման մի
աղջիկ եմ. սիրահարուում եմ որեւէ մէկի վրայ:
Մէկ էլ բան է, յանկարծ հայրդ իմանայ, հաս-
տատ իմացիր, որ քեզ կտոր կտոր կանէ:

ԳԻԻԼԶ.—Թող հայրս իմանայ, ինձ միանգամից սպաննէ,
որ հողիս ազատուի:

ԱՍԵԱ.—Յիմարութիւններ, յիմարութիւն: Վերկաց գնանք
միւս սենեակը, տես քեզ ինչեր եմ ասելու:
(Միասին զնուռ նն):

3.) Սուրբան Բէկ. (Առանձին)

Անդգամ արշին մալչու մօրքոյրը լաւ էր
ձեռքս ընկել, բայց չեղաւ: Հէնց ճիշտ իմ ու-
զած կինը նա էր, տարիքով, այրի. որ մի հատ
մոլլով և մի գլուխ շաքարով ամեն բան կը պըր-
ծնէր: Բայց արի տես որ բազդ չունեմ: Անըզ-
գամ լակոտ, իր այրի մօրաքրոջ փոխարէն,
իմ գեղեցիկ աղջիկս էր ուզում, կարծես աղջկա-
նիցս ձեռք եմ քաշել, որ բազարի լակոտին տա-
յի: Ես մի այնպիսի բէկ եմ, որ բոլոր ծանօթ-
ներս անունս գիտեն: Եւ յանկարծ լակոտի մէ-
կը ուզում է ինձ փեսայ դառնալ: Բայց մօ-
րաքրոջը կառնէի, և եթէ մի նկատողութիւն ա-
նող լինէր կասէի թէ մի խեղճ որբկայրի կին
էր, մեղքացայ առայ. մանաւանդ որ մատաղը
իրա ոտքով էր եկել: Սատանի ճուտ, գործը
խանգարեց և չթողեց որ վերջացնէինք... Է՛հ.
գնամ քիչ հանգստանամ. մէջքիս ցաւը նորից
բռնեց. (մտնում է աջ: Իսկ ձախից դուրս է
զայիս՝)

4.) Թէլլի. յետոյ Ասես

Թէլլի.—Է՛ֆ, աղաս էլի գնաց ձգուելու: Էդ մարդը ուզ-
ղակի գահլէս տարել է: հիմի էլի պիտի կանչէ՝
աղջի Թէլլի, արի մէջքս տրորի...

ՍՈՒԼԹ.-Բ.—(Դրսից) Աղջի Թէլլի, արի մէջքս տրորի:

Թէլլի.—Չէի՞ ասում. հիմի էլի պիտի սկսի... (Ներս է
մտնում)

ԱՍԵԱ.—Այսքան խրատեցի չեղաւ. երևում է որ աղջիկը
այդ լակոտի վրայ շատ է սիրահարուել: Այնպէս
է լալիս, կարկուտի նման այնքան արցունք է
թափում, որ մարդ խղճահարում է: Չգիտեմ,
որտեղից որտեղ այստեղ դուրս պըծաւ այդ ար-
շին մալ ալանը: Եթէ մի բէկի տղայ կամ մի
վաճառական էր եղել, էլի խօսք չունէի ասելու.
բանը այն է՝ որ մի փողոցային լակոտ է: (Լու-
սամուտից նայելով) Այդ մեր կողմը եկողը ո՞վ
է... Ա՛հ, ինչ գեղեցիկ երիտասարդ է. կարծես
բէկի տղայ լինի: Եթէ մարդ սիրահարուելու էլ
լինի, գոնէ այսպիսիին սիրահարուի: Արգեօք
մեզ մօտ ինչո՞ւ է գալիս: Այն. ուղղակի մեզ
մօտ է գալիս: Թող գայ, չպիտի հեռանամ. ե-
կաւ: (Դուրս քակում նն. Ասեսն քաց է անում
և Սիւրբանն մեկնելիս ձեռքով աշխատում է ե-
րեսը ծածկել):

5.) Նոյն եւ Սիւլէյման)

ՍԻԻԼԷՅ.—Սուլթան բէկը տանն է:

ԱՍԵԱ.—Այն տանն է. քիչ սպասեցէք այստեղ, իսկոյն գնամ կանչեմ: (Գնում է)

Անշուշտ Սուլթան բէկի աղջիկն է
Գեղեցիկութեամբ նոր բացուած վարդ է:
Բաղդ է, Ասկեար, որ պատահեցիր
Այս սիրունին հարսնացու ընտրեցիր:
Յաւում եմ որ ես չգիտէի,
Թէ չէ նրան ինքըս կառնէի:

Իսկ ի՞նչ կը լինի, եթէ փոխանակ Ասկեարի համար ուզելու հէնց ես ինձ համար ուզեմ... բայց ո՛չ. ընկերոջ նկատմամբ մի այդպիսի վարմունք իմ կողմից նամարդութիւն կը լինի: Ասկեարը ինձ այնքան վստահացել է, որ իբր պատգամաւոր այստեղ է ուղարկել, միևնոյն ժամանակ ինքը աղջկան սիրահարուած է. նահլաթ շէյթանին. մարդ պէտք է որ բարեկամութեան մէջ շիտակ լինի. ոչինչ. ես կը փնտրեմ ինձ համար մի ուրիշ գեղեցիկ աղջիկ կը գտնեմ:

6.) Նոյն եւ Սուլթան բէկ

ՍՈՒԼԹ.-Բ.—Բահ. Սիւլէյման, որտեղից որտեղ, խէր ըլի. նստիր տեսնենք, ի՞նչ կայ չկայ:

ՍԻԻԼԷՅ.—Խէր չեղած ինչ պէտք է եղած լինի. փառք Աստուծոյ, ամեն ինչ կարգին է:

ՍՈՒԼԹ.-Բ.—Շատ գեղեցիկ է, ասա տեսնենք, ուրիշ ինչ կայ-չկայ:

ՍԻԻԼԷՅ.—Գիտես ինչ կայ, բէկ. այս աշխարհի գործերը

այնպէս են դասաւորուած, որ մարդս մարդու միշտ կարիք է զգում: Տեսնում ես մի բոլորովին անծանօթ մարդու հետ բարեկամանում ես. և յետոյ էլ այդ մարդու հետ ազգական ես դառնում, միայն մի բան կայ, որ ազգականացած մարդը քեզ պատշաճ լինի, հարուստ լինի, անունով լինի: Օրինակի համար վերցնենք հենց մեր երիտասարդ վաճառական Ասկեարը...

ՍՈՒԼԹ.-Բ.—Այդ ո՞վ է:

ՍԻԻԼԷՅ.—Ճիշտ է, դու նրան ծանօթ չես, բայց նրա հօրը լաւ ես ճանաչում հանգուցեալին վաճառական Մուրսալի էին ասում, որ լաւ մարդկերանցից մէկն էր:

ՍՈՒԼԹ.-Բ.—Այն լաւ էի ճանաչում. իսկապէս, հանգուցեալը շատ լաւ մարդ էր:

ՍԻԻԼԷՅ.—Այո. այդ իմ Ասկեար ասածս էլ նրա որդին է, որ իր հօր բոլոր բարեմասնութիւնները ունի, նրա նման լաւ և խելացի մի տղայ է. միևնոյն ժամանակ առուտուրն ու կարողութիւնը շատ կարգին:

ՍՈՒԼԹ.-Բէկ.—Լաւ, Ասկեարը ի՞նչ է ասում:

ՍՈՒԼԷՅՄ.—Ասկեարի ասածը այն է, որ ուզում է քեզ ազգական դառնալ:

ՍՈՒԼԹ.-Բէկ.—Բայց իմ աղջիկս դեռ երեխայ է...

ՍԻԻԼԷՅՄ.—Չեմ կարծում, բէկ, որ երեխայ լինի. միևնոյն ժամանակ լաւ իմացիր, որ Ասկեարը ուրիշ մարդ է, և ես կարծեմ որ քեզ համար մի այդպիսի տղի ազգականութիւնը շատ օգտաւէտ կը լինի:

ՍՈՒԼԹ.-Բ.— Դու այդ մի բանը ճիշտ ես ասում, և իսկապէս վաճառական դասը ինձ շատ է դուր գալիս. ինձինքներ—մինձինքներ, դօխտուր—մօխտուր, փաստաբան—մաստաբան, ուչիտել—մուչիտելներին հետ ես գործ չեմ կարող ունենալ և չեմ էլ սիրում: Միայն մի բան կայ, որ Ասկեարին ես չեմ տեսել. թէև գիտեմ, որ հայրը լաւ մարդ էր և մեծ կարողութեան տէր, բայց յաճախ պատահում է, որ լաւ մարդիկ վատ որդիք են ունենում:

ՍԻԻԼԷՅՄ.— Ո՛չ բէկ. Ասկեարը շատ խելացի և լաւ տրդայ է և ես խնդրում եմ, որ ինձ վստահանաս ու խօսքերիս հաւատաս: Եւ եթէ իսկապէս Ասկեարը վատ մարդ լինէր, միթէ քո աղջիկը կը խնդրէի նրա համար:

ՍՈՒԼԹ.-Բ.— Եթէ այդպէս է՝ համաձայն եմ. Աստուած շնորհաւոր անէ:

ՍԻԻԼԷՅՄ.— (Ձեռքը ընկնելով). Աստուած երկուսին էլ բազում տրտման տէր դառնան:

ՍՈՒԼԹ.-Բ.— (Վերկենալով). Հիմի համեցէք, համեցէք միւս սենեակը, թէյ խմենք և թէ խօսակցութիւնը շարունակենք: (Գնում են):

7). Աստա (տոանձին).

Աստուած վիայ կեանքումս այսպիսի գեղեցիկ տղայ չէի տեսել. ես դուան ձեզքից միանգամ էլ նայեմ... ես էլ այս տղին եմ սիրահարուելու. Գիւլչօհրան լակոտի մէկի վրայ սիրահարուելուց յետոյ, ես ինչո՞ւ բէկի տղի նման

մի երիտասարդի չսիրահարուեմ: Եւ իսկապէս, երբ մարդս մէկին սիրում է, այն ժամանակ որքան յուսահատ վիճակ է ստեղծւում...

Քեզ տեսնելուս պէս

Ա՛խ, իմ սիրտս թըրթռաց.

Այժմ ձգտում եմ դեպ' քեզ,

Գամ գիրկդ ինձ ընդունես:

Ես որբ եմ, անբաղդ,

Ո՛վ սիրուն երիտասարդ.

Այժմ ձգտում եմ դեպ' քեզ

Գամ գիրկդ ինձ ընդունես:

Գնամ Գիւլչօհրայի մօտ մեր դարդերը միմեանց պատմելու: Մենք հիմա վշտակից ենք: (Գնում է):

ԹԷԼԼԻ.— Լաւ որ հիւր եկաւ, և ինձ աղայիս ձեռքից ազատեց, թէ չէ. այստեղս ձմիրը, այստեղս տրորիք, այս կողմս շփիր, այն կողմս շփիր, ՕՓ, բոլորովին յօգնեցի էլի: Եթէ մի լաւ մարդ լինէր ու ինձ առնէր՝ ուղղակի հողիս կազատուէր. բայց որտեղ է...

Գիշեր ցերեկ աչքս ճամբին

Իմ սիրելի, ո՛վ իմ անգին,

Քեզ է մտում,—իմ ցանկալին,

Քեզ երազում թշառ Թէլլին:

Եթէ յայտնէիր յանկարծ,

Կարժանանամ, ա՛խ, Տէր-Աստուած,

Քեզ է մտում—իմ ցանկալին,

Քեզ երազում թշառ Թէլլին:

Եւ կուգայիր դու քաջի պէս
Որ արցունքոտ աչքս սրբես,
Քեզ է մնում—իմ ցանկալին,
Քեզ երազում թշուա թէլլին:

(Դոտը ծեծում են). այս սով է. մի գուցէ իմ երազածն է. (ըստէ անում):

8). Նոյն եւ Վէլի.

Վէլի.—Սուլթան բէկի տունը այս է:

Թէլլի.—Այո, այս է. ի՞նչ գործ ունես:

Վէլի.—Ձեզ մօտ մի հիւր կայ:

Թէլլի.—Այո, կայ. ի՞նչ է:

Վէլի.—Լաւ. բայց ինչի՞ ես չարանում:

Թէլլի.—Ինչի՞ պիտի չարանամ. բայց դու սով ես:

Վէլի.—Ես քիլիմչի եմ. (մեկուտի). բայց հիանալի աղջիկ է. երեւի աղախին է:

Թէլլի.—Քիլիմչին ի՞նչ բան է:

Վէլի.—Նախ ինձ էն ասա թէ՛ գո՛ւ ով ես:

Թէլլի.—Ես այս տանը աղախինն եմ:

Վէլի.—Ես էլ այն տանը ծառան եմ:

Թէլլի.—Ո՞ր տանը:

Վէլի.—Հէնց էն տանը, էն:

Դու աղախին ես, ես ծառայ քեզի (2)

Ուրեմըն ինչո՞ւ ամուրի մնաս, (2)

Դէ, ասա, դու կին ինձի կը դառնաս,

Հը, կը դառնաս:

(Պար)

Եկ, իմ սիրելի, եկ դու իմ հոգեակ (2)

Դէ, եկ իմ ջէյրան, եկ իմ աղաւնեակ »

Ես քեզ առնեմ, ես քեզ առնեմ, »

Կեանքս կեանքիդ մատաղ անեմ: »

(Պար)

Թէլլի.—Վայ, կարծես այս տղան գժուել է:

Վէլի.— Ինչի՞ պիտի գիժ լինեմ, մարալըս:

Թէլլի.—Ես մարալ չեմ:

Վէլի.—Դու ինձ համար մարալ ես, մարալ:

Թէլլի.—(Համոյքով). Դէէ, շուտ, խօսիր, ասա տեսեմ, ի՞նչ ես ուզում:

Վէլի.—Քեզ եմ ուզում, քեզ, հասկացար:

Թէլլի.—Վայ, այս ի՞նչ կրակն ընկայ:

Վէլի.—Աչքիս լոյսը, գնա էն հիւրին ասա, մի դուրս գայ, խօսք ունիմ ասելու: (Թէլլին դուրս է գնում) Գնա մարալս, գնա. գնա ջէյրանս, գնա: Հիանալի աղջիկ է. թող աղաս այն աղջկանը առնէ, ես էլ սրան առնեմ, երկուսիս հարսանիքն էլ մի օրում լինի: (Չեղքերը միմեանց է քսում):

9). Սուլթան-ըէկ եւ Սուլէյման

ՍՈՒՎԷՅՄ.—Ա՛, գո՛ւ ես, Վէլի, իմացայ թէ ինչի ես եկել. դէ, գնանք: Բէկ առայժմ ցտեսութիւն:

ՍՈՒԼԹ.—Յտեսութիւն, գնաս բարեաւ: Աղջի թէլլի, Գիւլչօհրային ու Ասեային ասա թող այստեղ գան. աղջկանս էլ ասեմ, տեսեմ ի՞նչ է ասում... այսպէս է աշխարհի գործերը... մի ժամանակ մենք էլ ջահել էինք...

10.) նոյն, Գիւլջօճրա եւ Ասեա

ՍՈՒԼԹ.-Բ.—Համեցէք տեսնեմ: Գիւլջօճրան, ի՞նչու այդպէս հիւանդոտ տեսք ունես. ի՞նչ է պատահել, հիւանդ խօ՞ չես:

ԳԻԻԼՉՕՅՐԱ.—Ո՛չ հայրիկ լաւ եմ:

ՍՈՒԼԹ.-Բ.—Շատ լաւ: Աղջիկս գիտե՞ս ինչ կայ:

ԳԻԻԼՉՕՅՐԱ.—Ո՛չ հայրիկ:

ՍՈՒԼԹ.-Բ.—Եթէ այդպէս է, ուրեմն գիտցիր, որ քեզ մարդու եմ տալիս:

ԱՍԵԱ.—(Մեկուսի). Ափսոս տղայ. ձեռքիցս փախաւ:

ԳԻԻԼՉՕՅ.—Հայրիկ. ի՞նչ ժամանակ է, որ ես ամուսնանամ:

ՍՈՒԼԹ.-Բ.—Շատ լաւ ժամանակդ է. երեխայ խօ չես: ամեն բան գիտես, ամեն ինչ հասկանում ես: Քեզ մի այնպիսի վաճառականի եմ տալիս, որ թէ եւրիտասարդ է, թէ հարուստ և թէ կարողութեան տէր է:

ԳԻԻԼՉ.—Հայրիկ, չբարկանաս, ես մարդու գնացողը չեմ:

ՍՈՒԼԹ.-Բ.—Տես, մի յիմարանար. ես միջնորդին խօսք տւի գնաց:

ԱՍԵԱ.—(Մեկուսի). Փառք Աստուծոյ, եկող տղան միջնորդ է եղել:

ԳԻԻԼՉՕՅՐԱ.—Ոչ հայրիկ. ես չեմ կամենում ամուսնանալ:

ՍՈՒԼԹ.-Բ.—Լաւ, լաւ, նազ մի անի. գիտեմ, որ սրտով ուրախ ես:

ԳԻԻԼՉՕՅՐԱ.—Ոչ հայրիկ. ճշմարիտն եմ ասում, որ ես չեմ կամենում ամուսնանալ: Ուզում ես ինձ խփիր, սպանիր, միայն մի ամուսնացնի:

ՍՈՒԼԹ.-Բ.—Ուրեմն դու ճշմարիտն ես ասում: Այդ ինչ յիմար խօսք է: Ի՞նչպէս թէ ամուսնանալ չես ուզում, տանը մնալով ու պառաւելով ի՞նչ պիտի դառնաս:

ԳԻԻԼՉՕՅՐԱ.—(Լալով). Ես մարդու գնալ չեմ ուզում:

ՍՈՒԼԹ.-Բ.—Ինձ նայիր. մի գժւի. դու խօսելու ի՞նչ իրաւունք ունես. երբ հայրդ քեզ ամուսնացնէ՞ դու պարտաւոր ես հնազանդուել:

ԱՍԵԱ.—Ի հարկէ, Գիւլջօճրա. ինչ որ հայրդ ասում է, դու նրան լսիր: Հիմի որ քեզ մարդու են տալիս, դու պարտաւոր ես գնալ: Էլ խօսելը աւելորդ է:

ԳԻԻԼՉՕՅՐԱ.—Հայրս թող ինձ սպանէ, բայց չամուսնացնէ:

ԱՍԵԱ.—Բայց դու խօսելու ի՞նչ իրաւունք ունես:

ՍՈՒԼԹ.-Բ.—Քեզ ասում եմ մի յիմարանայ... ես քեզ մի այնպիսի մարդու եմ տալիս, որի նմանը չես գտնիլ. դու ի՞նչ ես կարծում:

ԳԻԻԼՉՕՅ.—Մտեային տուր այդ մարդուն, թող ես տանը մնամ:

ՍՈՒԼԹ.-Բ.—Ի՞նչ ես դադարկ-դադարկ խօսում. եթէ Ասեային ուզող լինի՝ նրան էլ մարդու կը տամ. հիմի քեզ են ուզում, և պէտք է որ առաջ քեզ ամուսնացնեմ:

ԱՍԵԱ.—Ի հարկէ որ այդպէս է:

ԳԻԻԼՉՕՅ.—Ես չեմ կամենում ամուսնանալ:

ՍՈՒԼԹ.-Բ.—Այդ քո գործը չէ. ի՞նչպէ՞ս կարող ես չամուսնանալ: Հայրդ հրամայում է քեզ՝ ամուսնանալ—ամուսնացիր: Իսկ եթէ շատ էլ դէս ու

դէն անես, տկանջիցդ կը բռնեմ ու պատին կը մեխեմ: (Գիւլչօհրան լալիս է իսկ Սուլթան բէկը ըստկացած մ'ան է գալիս, յետոյ մ'նկմացած). Աղջիկս, գուցէ դու կարծում ես որ քեզ մի վատ մարդո՞ւ եմ տալիս. դու այսքանը լաւ իմացիր, քեզ մի այնպիսի տղի եմ տալիս, որ կարծես թագաւորի գաւակը լինի: Կտրիճ տղայ, փողը շատ, կարողութիւնը մեծ, ուրեմն ես յիմար եմ որ քեզ վատ մարդու տամ: Դու իմ աչքի լոյս միակ աղջիկն ես. մի՞թէ ես քեզ կամբողջացնեմ. դու լսիր քո ծեր հօր խօսքին և յիմարութիւն մի անի:

ԳԻԻԼԶ.— (Ղալով) Հայրիկ, Աստուած վկայ ամուսնանալու բնաւ սիրտ չունեմ: Ի՞նչ անեմ: Դու ինձ մի ամուսնացնի. թող տանը մնամ:

ՍՈՒԼԹ.—Բ.— Աղջիկս. մի հակառակիր, հօրդ խօսքին հնազանդիր, ապա թէ ոչ Աստուած քեզ կամբողջացնէ: Այս էլ իմացիր որ իմ խօսքս խօսք է. ես այն մարդուն խօսք եմ տուել. այսօր-վաղը նշանդ կտան, քեարինը կը կտրեն, հարսանիքը կը լինի... մարդու կը գնաս. ամուսինդ էլ հարուստ, ինքը լաւ մարդ, տուն ու երեխանց տէր կը լինես, ես էլ այս ծեր օրերիս մի քիչ կը հանգստանամ: Գեղ ինչ որ ասում եմ, դու իմ խօսքին լսիր:

ԳԻԻԼԶ.— Հայր, եթէ ուզում ես որ ես ամուսնանամ, այն ժամանակ թող որ ուզած մարդուս գնամ:

ԱՍԵԱ.— (Վախից ու զարմանից երեսը շուտ է տալիս):

ՍՈՒԼԹ.—Բ.— Աղջիկս, սով է քո ուզածը, ասա տեսնենք:

ԳԻԻԼԶ.— Ինձ մեծ ցաւերի մէջ ձգեց, — Արշին մալ ալան. Իմ սիրտըս ու հոգիս մաշեց, — այրւում եմ: Օր ու գիշեր ուշք ու միտքս՝ — Արշին մալ ալան. Այդ է միայն երազանքըս, — այրւում եմ: Հէնց տեսնելիս քեզ սիրեցի, — Արշին մալ ալան, Ախ ու վախի մէջ հարւեցի, — այրւում եմ:

ՍՈՒԼԹ.—Բ.— Աղջիկս, արշին մալ ալանը սով է... (Մեկուսի) գուցէ էն մօրաքրոջ հետ եկող տղան է:

ԳԻԻԼԶ.— Եթէ ես ամուսնանալու լինեմ, միայն նրան կը գնամ:

ՍՈՒԼԹ.—Բ.— Այդ ինչէ՞ր ես դուրս տալիս, յիմար աղջիկ. մի բազարի լակոտի հետ պիտի ամուսնանաս. խելագարուէլ ես, ինչ է: Աստուած է վկայ, այնպէս կը հասցնեմ, որ ատամներդ բերանդ կը թափուի: Սուլթան բէկի աղջիկը մի լակոտի վրայ սիրահարուի. բան, բան, բան: Հիմի իմացայ թէ ինչու չես ուզում ամուսնանալ. բայց լաւ իմացիր, եթէ այս յիմարութիւնը երկար շարունակուի, երգւում եմ հօրս գերեզմանով քեզ այնպիսի մի հարսանիք անել կը տամ, մի այնպիսի հարսանիք՝ որ մէկ շունչով հոգիդ դուրս կըգայ: Դու քո այդ պրարմունքով իմ պատիւս ես արատաւորում: Դու ի՞նչ իրաւունքով արշին մալ ալանի երեսին ես նայում: Թող, մի թող այդ արշին մալին իմ աչքիս երևայ, ես նրա վրայ այնպէս մի փամփուշտ կըսկեմ, որ նրանից հետք անգամ չի մնայ: Լաւ իմացիր, որ ինձ Սուլթան բէկ կասեն, ես անպատուութիւն չեմ կարող տանել, քեզ էլ կսպանեմ, նրան էլ կսպանեմ:

ԳԻՒԼԶ.—(Լալազին) Հայր, Աստուած վկայ սպանիր ինձ, որ հոգիս ազատուի:

ՍՈՒԼԹ.-Բ.—Պիտի սպանեմ: Այս փափախը ինձ հարամ լինի, որ եթէ մի անգամ էլ արշին մալ ալանի անունը բերանդ առնես՝ քեզ կտոր-կտոր չանեմ: Այսպիսի անպատուութիւն կը լինի, որ իմ աղջիկս լակոտ-լուկուտի վրայ սիրահարուի: Վեր, վեր կաց շուտ, կորիք աչքիս առաջից. կորիք, անպատիւ աղջիկ: (Գիւլչօճրան գնում է, Ասեահն) Արշին մալ ալանը երբ էր եկել այստեղ:

ԱՍԵԱ.—Աստուած վկայ չգիտեմ:

ՍՈՒԼԹ.-Բ.—Ի՞նչպէս թէ չգիտես. ստում և թաքցնում էք ինձանից: Դուք էլ կորէք այստեղից: (Ասեա եւ Թէլլի գնում են): Ի՞նչ գարմանալի փորձանք եկաւ գլխիս: Շանը մէկը գալիս է իմ դրանս և աղջկանս սիրտն է գրաւում. այսպէս էլ անպատուութիւն կըլինի: Հիմա եմ հասկանում թէ ինչու մօրքրոջ փոխարէն աղջկանս էր ուզում: Թող կորչի գնա, նրա մօրքուրն էլ չուզեցինք: Աղջիկս կատարեալ գժուել է. պէտք է շտապել ամուսնացնել ու գնա. եթէ ոչ այս գործից վերջը մի փորձանք դուրս կը գայ: Եթէ Սիւլէյ-մանին տեսնեմ, պիտի ասեմ որ իմաց անէ Ասկեարին, որ գայ աղջկանս փախցնէ, որովհետև ինչպէս երևում է, աղջիկս յօժար կամքով նրան չպիտի գնա, իմ էլ բարկութիւնը կը բռնէ ու կուտամ կապաննեմ: (Գնում է):

11.) Գիւլչօճրա. յետոյ Ասկեար

ԳԻՒԼԶ.—(Լալով զայիս տախտի վրայ ընկնում է. կամաց մտնում է Ասկեարը Արշին մալչու հագուստով. նրան տեսնելիս իսկոյն վեր է թռչում)

Շուտ, իսկոյն այստեղից հեռացիր գնա, թէ չէ հայրս մեզ երկուսիս էլ պիտի սպաննէ. դէ շտապիր գնա:

ԱՍԿԵԱՐ.—Ի՞նչ կայ. ի՞նչ է պատահել:

ԳԻՒԼԶ.—Հայրս ինձ ուրիշին է տալիս. իսկ ես չեմ ուզում գնալ: Նա իմացաւ, որ ես քեզ վրայ սիրահարուած եմ. սաստիկ բարկացաւ ու ինձ էլ քեզ էլ պէտք է սպաննէ:

ԱՍԿԵԱՐ.—Մի վախենար, Գիւլչօճրա, Աստուծով գործը ուրիշ կերպ կը կարգաւորուի:

ԳԻՒԼԶ.—Շուտ գնա, ի սէր Աստուծոյ, թէ չէ, քեզ իմ աջքի առաջ կըսպաննէ:

ԱՍԿԵԱՐ.—Գնում եմ, Գիւլչօճրա, բայց Աստուած ողորմած է. մի վախենայ, ցտեսութիւն:

ԳԻՒԼԶ.—Տէր Աստուած. դու ինձ մահացրու, որ հոգիս ազատուի: (Գնում է)

12.) Սուլթան քէկ. յետոյ Ասեա, Գիւլչօճրա եւ Թէլլի

ՍՈՒԼԹ.-Բ.—Աղջի Ասեան, Թէլլի, այստեղ եկէք. (Մտնում են) Տեսէք, ես շուկայ եմ գնում, Գիւլչօճրային խրատեցէք, թող խելքը գլուխը հաւաքի, թէ չէ բողբոլիդ էլ կը կոտորեմ: (Գնում է)

ԱՍԵԱ.—Հիմի մենք ի՞նչ անենք. միթէ մենք մեղաւոր ենք, որ Գիւլչօճրան մի լակոտի վրայ սիրահար-

ւել է: Աղջի, գնա Գիւլչօհրային այստեղ կանչիր, տեսնում էք էդ աղջկայ յանդգնութիւնը. ուղղակի հօր երեսին ասում է թէ սիրահարւած է արջին մալ ալանի վրայ: Այս աղջիկը կատարեալ փորձանք դառաւ մեր գլխին: (Գիւլչօհրան մտնում է ընկնում թախտի վրայ):

ԱՍԵԱ և ԹԷԼԼԻ. (Միասին երգում են)

Բաւ է այսքան լաց հառաչանք,
Ինչո՞ւ համար այս տանջանք.
Մալչուն դու գերադասեցիր
Հօրըդ արհամարհեցիր:

ԳԻԻԼԶ.— Զրկւած եմ իրաւունքից,
Օգնութեան յոյս՝— ոչ սքից.
Վիճակս է յուսահատ, տրտում
Ինչպէս չի լամ անդադրում:

ԱՍԵԱ և ԹԷԼԼԻ.— Անվայել է քեզ ախ ու վախ,
Եղիր դու մեզ պէս ուրախ.
Զւարթ նայիր դու ամենուն
Որ ունենաս լաւ անուն:

ՎԱՐԱԳՈՅՐ

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ՉՈՐՈՐԳ

Ասկեարի տանը լաւ կանաւորուած մի սենեակ:

1.) Ասկեար յետոյ Գիւլչօհրա

ԱՍԿԵԱՐ.— Ի՞նչ փորձանքներ բերի խեղճ Գիւլչօհրայի գլխին: Խեղճ աղջիկ: Ի՞նքը այնպէս է հաւատացած, որ իրան ուրիշի հետ են ամուսնացնում: Բայց զարմանալի հաստատամիտ աղջիկ է. յօժար կամքով երբէք չկամեցաւ ուրիշի հետ ամուսնանալ: Հիմի իր հօր խնդրանքով, մարդիկ եմ ուղարկել որ նրան փախցնեն: Ոչինչ. մի երկու ժամից յետոյ ամեն գաղտնիք կը բացուի: Այն ժամանակ աղջիկն էլ ուրախ կը լինի, ես էլ, հայրն էլ: Միայն կամենում եմ որքան կարելի է աղջկան շուտ տանեն, որ խեղճը ի գուր աւելի չտառապի: Բայց իմ կատարած գործս էլ զարմանալի էր. չամուսնացայ, չամուսնացայ և վերջիվերջոյ այսպիսի խաղով ամուսնացայ: Եւ շատ լաւ արեցի: Աստուած լուսաւորէ Սիւլէյմանի հօր հոգին. ինձ զարմանալի բան սովորեցրեց: Այսպիսով հիմի գոնէ տեսած ու սիրած աղջկանս հետ կամուսնանամ և աղջիկն էլ ինձ կը սիրէ... Գնամ տեսնեմ, մօրաքոյրս պատուէրներս կատարել է թէ ոչ:

(Գնում է: Քիչ յետոյ դրան դրսից ձայներ է լսում. մի քանի տղերք Գիւլջօհրային ներս նն գցում սենեակ ու դուռը փակելով գնում են: Գիւլջօհրան շարով ընկնում է սահսի փայ):

ԳԻԻԼԶ.— Օհ. այս ինչ սարսափներ եմ կրում. ինձ բռն-
նութեամբ ամուսնացնում են. ինձ բաժանում
են իմ սիրածից և չգիտեմ ո՞ւր են և անտես: Ես
չեմ ուզում այս հարստութիւնն ու այս փար-
թամութիւնը: Ես իմ սիրածին եմ ուզում: (Նրե-
սը ծածկելով շարիս է):

Բազզը բռնի իմ սիրեկանից
Բաժնեց ու թողեց մեն-մենակ ինձ.
Անյոյս, աչքերովս փնտրեմ զուր,
Ո՛ւր է օգնութիւն. ո՞ւր է, ո՞ւր:

Սպանում է ինձ վիշտը թագուն՝
Որ նա չիմացաւ ցաւն իմ հոգուն.
Այժբմ աչքերովս փնտրեմ զուր,
Ո՛ւր է օգնութիւն, ո՞ւր է նա, ո՞ւր:

Ես այլևս այսպէս չեմ կարող շարունակել.
Էլ ոյժ չմնաց ինձանում. լաւն այն է որ ինքս
ինձ սպանեմ կամ խեղդեմ ու ազատուեմ: (Իր
շարք ոչորում է որ ինքն իրան խեղդէ, բայց այդ
միջոցին արշին մաշ աշակի ձայնն է լսում,
զարմացած սկսեց է դնում և այդ ձայնը նրան
ուրախացնում է):

2.) Նոյն. Ասկեսար

ԱՍԿԵՍՐ.— (Բեմի ետեւից լսում է «Արշին մալ ալան»

երգի ձայնը որից յետոյ Ասկեսարը մտնում է
և Գիւլջօհրային քարեում)

ԳԻԻԼԶ.— (Չարմացած նայում է) Դ՞ու ես թէ՛ ուրիշն է:
ԱՍԿԵՍՐ.— Ես եմ, ես եմ Գիւլջօհրա, հանգիստ եղիք:

ԳԻԻԼԶ.— (Հալով) Տեսնում ես գլխիս ինչեր բերին. եթէ
քիչ էլ ուշանայիր՝ ինքս ինձ խեղդած պիտի լի-
նէի. բայց դու սրտեղից եկար այստեղ. քեզ որ
այստեղ տեսնեն՝ կրսպանեն: Եթէ հնարաւոր է
փախչենք այստեղից:

ԱՍԿԵՍՐ.— (Ժիծաղելով) Իմ տնից ո՞ւր փախչենք:

ԳԻԻԼԶ.— Ի՞նչ ես ասում այս ո՞ւր տունն է:
ԱՍԿԵՍՐ.— Սա իմ տունն է, որ յետոյ քո տունը պէտք
է լինի:

ԳԻԻԼԶ.— Ինչու չեմ կարողանում բմբռնել: Ո՞վ էր ինձ
փախցնողը:

ԱՍԿԵՍՐ.— Այդ մարդկանց ես էի ուղարկել:

ԳԻԻԼԶ.— Իսկ ես կարծում էի թէ հայրս թողել է, որ այդ
վաճառականի մարդիկը զան և ինձ փախցնեն:

ԱՍԿԵՍՐ.— Ի հարկէ այդպէս է:

ԳԻԻԼԶ.— Էլի չհասկացայ: Ի սէր Աստուծոյ ինձ հասկաց-
րու թէ այս ինչ խոսքեր են:

ԱՍԿԵՍՐ.— Լսիր, Գիւլջօհրա. քեզ վրայ սիրահարած ար-
շին մալչին էլ ես եմ. այն վաճառականն էլ ես
եմ՝ որին հայրդ քեզ կամենում էր տալ, ես
կեղծ արշին մալչի դարձած, ինձ համար աղջիկ
էի փնտրում, որ վերջ ի վերջոյ քեզ զտայ.
հօրիցդ ուղեցի, նա էլ տուեց, բայց հայրդ
չէր իմանում թէ ես արշին մալ ծախող աղան
եմ, որովհետև նա ինձ սկզբից չէ տեսել:

ԳԻԻԼԶ. — (Նազանքով) Անխիդճ, բաս ինձ չէիր օփսոսում, որ այսքան նեղութիւն պատճառեցիր: Քիչ էր մտում հայրս ինձ սպանէր, վերջապէս ես կամենում էի ինքնասպան լինել... եթէ զիտենայի քեզ չէի սիրի...

ԱՍԿԵԱՐ. — Բայց սա կայ, որ մեր հիմիկուայ ուրախութիւնը մեր բոլոր կրած վշտերին սրբում տանում է, այնպէս չէ, իմ աննման Գիւլջօճրա:

ԳԻԻԼԶՕՂ. — Այդպէս է:

ԱՍԿԵԱՐ. — Դէ, հիմի գնանք մէկ-մէկ բոլոր սենեակները ցոյց տամ, և մօրքրոջս էլ տեսնենք: (Գնում են)

3.) Սուլթան բէկ, յետոյ Ասկեար.

ՍՈՒԼԹ.-Բ. — Էլի հօր սիրտը. չկարողացայ հանգստանալ, ասացի գնամ տեսնեմ, աղջիկս գլխին մի փորձանք չբերի. բայց սրտեղ են սրանք: Ա՛յ տղերք, ո՞վ կայ այստեղ:

ԱՍԿԵԱՐ. — Բարեւ Սուլթան բէկ. բարի եկանք:

ՍՈՒԼԹ.-Բ. — (Չարմացած). Տղաս... դու Ասկեարն ես թէ՛ արշին մալ ծախողը:

ԱՍԿԵԱՐ. — Ոչ բէկ. ես Հաջի-Մուրսալու տղայ Ասկեարն եմ, գրադմունքով էլ վաճառական:

ՍՈՒԼԹ.-Բ. — Ասում էի է... միայն աչքիս այնպէս երևաց որ մօտս կանգնողը այն լսկոտն էր:

ԱՍԿԵԱՐ. — Այդ սր լսկոտը:

ՍՈՒԼԹ.-Բ. — Ոչինչ, արշին մալ ծախող մէկը կար:

ԱՍԿԵԱՐ. — Իմացայ: Դու ուզում էիր նրա մօրաքոյրը

առնել, նա էլ քո աղջիկն ուզեց, յետոյ դու բարկացար և նրան վռնդեցիր. այնպէս չէ:

ՍՈՒԼԹ.-Բ. — Այնպէս է, բայց այդ բոլորը դու սրտեղից գիտես:

ԱՍԿԵԱՐ. — Ի՞նչպէս չգիտենամ, քանի որ ես ինքս էի:

ՍՈՒԼԹ.-Բ. — Ի՞նչ ես խօսում:

ԱՍԿԵԱՐ. — Յյո, այո. ես այնպէս արեցի, որ այդպիսով առաջ աղջկան տեսնեմ, յետոյ ամուսնանամ:

ՍՈՒԼԹ.-Բ. — Ճշմարիտ ես ասում:

ԱՍԿԵԱՐ. — Այս բոլորիս աղջիկդ կուզայ և կը հաստատէ. (Կանչելով). Գիւլջօճրա, այստեղ արի:

4.) Նոյնք եւ Գիւլջօճրա.

ԳԻԻԼԶՕՂ. — (Հօրը դիմելով). Տեսնում ես հայրիկ, թէ քո ասածը եղաւ և թէ իմ ասածը: Ասկեարը մեր գլխին այս խաղը խաղալով քո բարկութեան և իմ վշտերիս պատճառը եղաւ. բոլոր մեղքը սրանն է:

ՍՈՒԼԹ.-Բ. — Հիմի հասկացայ. շատ հնարագէտն ես եղել. քո հանգուցեալ հայրդ բնաւ այսպէս չէր: Է, ինչպէս ես, լմաւ ես... աղջի, Գիւլջօճրա, մօտեցիր: (Գիւլջօճրան մօտենում է եւ հօր ձեռքը համընդունում). շատ լաւ, բայց շատ խորամանկն ես եղել. բա քո մօրքուրը ի՞նչ եղաւ. և իսկապէս, նա քո մօրքուրն էր թէ դա էլ մի խաղ էր:

ԱՍԿԵԱՐ. — Ո՛չ, իսկապէս մօրաքոյրս է:

ՍՈՒԼԹ.-Բ. — Եւ ինքն էլ այլ ի՞նչ է:

ԱՍԿԵԱՐ. — Այո, այրի է:

ՍՈՒԼԹ.-Բ. — Դէ բեր. ես էլ նրան առնեմ է:

ԱՍԿԵԱՐ. — Բան չեմ ասում. սա: Գիւլջօճրա, մի նեղու-

թիւն կրիր և մօրքրոջս կանչիր: (Գիւլջօհրան գը- նում է):

ՍՈՒԼԹ.-Բ.— Ես էլ նրան առնեմ. նա այրի՛ ես այրի, բը- ժիշկն էլ ինձ խորհուրդ է տալիս, որ կին առ- նեմ: Ես գիտեմ. բժիշկը եթէ մօրքրոջդ տեսնէ, նրան էլ կասէ թէ մարդու գնա՛:

ԱՍԿԵԱՐ.— Ա՛ն էլի, և երկու կողմից էլ ազգական կը լի- նենք. հիմի իմացար թէ երկու կողմից ազգա- կան լինելը ի՞նչ է նշանակում:

ՍՈՒԼԹ.-Բ.— (Ժպտալով). Իմացոյ, իմացոյ ով խորամանկ:

5.) Նոյնք, Գիւլջօհրա, Զահան.

ՍՈՒԼԹ.-Բ.— (Զահանին) Դէ արի էլի, առաջ արի: Տեսնում ես քո այս քրոջ որդին ի՞նչ խորամանկն է եղել: Դէ, հիմի ի՞նչ ես ասում. մի հատ մոլլա, մի գլուխ շաքար ու գործը պրծնի գնայ: Նաև ասում եմ Ասկեարի և Գիւլջօհրայի, իմ ու քո հարսանիքները մէկ օրում կատարենք:

ԶԱՀԱՆ.— Կամուսնանամ ես նրա հետ՝ ով որ փողեր շատ ունի, (2)

Ո՛վ որ փողեր շատ ունի, և հոգս ու ցաւեր չունի, (2)

Փող ունե՞ս (2)

ՍՈՒԼԹ.-Բ.— Կոյ, կոյ: (2)

ԶԱՀԱՆ.— Փող ունես՝ ես քոնն եմ, } (2)
Փող ունես՝ ծառադ եմ:

ԲՈՂՈՐԸ.— Փողը այնպիսի մի բան է, որի ոյժը շատ մեծ է, (2)

Փողի ոյժը շատ մեծ է, ամեն բանի կը յազթէ: (2)

Փող ունե՞ս, (2)

ՍՈՒԼԹ.-Բ.— Կոյ, կոյ: (2)

ԲՈՂՈՐԸ.— Փող ունես՝ նա քոնն է, Փող ունես ծառադ է:

ԶԱՀԱՆ.— Ի՞նչ ասեմ. Աստուած շնորհաւոր անէ:

ԲՈՂՈՐԸ.— Ամէն, ամէն:

ՍՈՒԼԹ.-Բ.— Երեխերքը տանը մենակ մնացին, կանհան- գատանան. զրկեցէք ձեր ծառային, որ Ասեային ու թէլլիին այստեղ բերեն:

ԱՍԿԵԱՐ.— Այս բոպէիս գնամ ուղարկեմ: (Գնում է):

ՍՈՒԼԹ.-Բ.— Աստուած վկայ, ուրախութիւնիցս կարծում եմ, որ բոլորովին երիտասարդացայ: (Արագ շրջելով). Այսինքն ձեր էլ չեմ, մի կարիճ տղայ եմ: Կեցցեմ ես:

ԱՍԿԵԱՐ.— (Մտնելով). Ղրկեցի:

6.) Նոյնք եւ Սիւլէյման

ՍԻԻԼԷՅՄ.— Բարև ձեզ:

ՍՈՒԼԹ.-Բ.— Վահ, Սիւլէյման, Աստուած բարին, սիրելիս, քո այս բարեկամդ ի՞նչ խորամանկ մարդ է եղել, ահազին փորձանք բացեց մեր գլխին:

ՍԻԻԼԷՅՄ.— Այո, շատ խորամանկն է, և չգիտեմ ումից է այդ բաները սովորել:

ԱՍԿԵԱՐ.— Ինչպէ՞ս թէ ումից եմ սովորել. մի՞թէ այս

բոլորը սովորեցնողը դու չէիր. անս, թող մօր-
քուրս ասէ:

ՋԱՀԱՆ — Ճիշտ է, այս բոլոր խորամանկութիւններէ հե-
ղինակը Սիւլէյմանն է. նա սովորեցրեց:

ՍՈՒԼԹ.-Բ.— Այսպէս ուրեմն, Սիւլէյման, ես քեզ այդ-
պէս չէի կարծում. դու այս բաները որտեղից
ես սովորել:

ՍԻԻԼԷՅՄ.— Ես եմ հնարել, բէկ:

ՍՈՒԼԹ.-Բ.— Այ ըս գլուխդ ապրի:

ՍԻԻԼԷՅՄ.— Լա՛ւ. Գիւլջօճրան սա է:

ԱՍԿԵՍՐ.— Այո, սա է:

ՍԻԻԼԷՅՄ.— Իսկ իմ տեսած աղջիկը սրան չէ նմանում:

ՍՈՒԼԹ.-Բ.— Դու երևի Ասեային ես տեսել:

ՍԻԻԼԷՅՄ.— Ասեան ո՞վ է:

ՍՈՒԼԹ.-Բ.— Եղբօրս աղջիկն է:

ՍԻԻԼԷՅՄ.— (Ուրախ). Թէ որ այդպէս է, ես ի՞նչու ամուրի
մնամ: Արի մի հարսանիք էլ ես անեմ:

ՍՈՒԼԹ.-Բ.— Ճիշտ ես ասում:

ՍՈՒԼԷՅՄ.— Ի հարկէ:

ՍՈՒԼԹ.-Բ.— Տւեցի, սու:

ԲՈՂՈՐԸ.— Աստուած շնորհաւոր անէ, Աստուած շնորհա-
ւոր անէ:

Դ.) Եոյնք Ասեա, Թէլլի եւ Վէլի.

ՍՈՒԼԹ.-Բ.— Ահա եկան. աղջի Ասեա, եթէ քեզ այս տը-
ղին տամ, կը գնան:

ԱՍԵԱ.— Կամուսնանամ ես նրա հետ՝ ով որ փողեր
շատ ունի, (2)

Ով որ փողեր շատ ունի՝ և հոգս ու ցաւեր
չունի: (2)

Փող ունես: (2)

ՍԻԻԼԷՅՄ.— Կայ, կայ: (2)

ԱՍԵԱ.— Փող ունես՝ ես քոնն եմ, (2)

Փող ունես՝ ծառադ եմ: (2)

ԲՈՂՈՐԸ.— Փողը այնպիսի մի բան է, որի ոյժը շատ
մեծ է, (2)

Փողի ոյժը շատ մեծ է, ամեն բանի կըյաղթէ: (2)

Փող ունես: (2)

ՍԻԻԼԷՅՄ.— Կայ, կայ: (2)

ԲՈՂՈՐԸ.— Փող ունես՝ նա քոնն է, (2)

Փող ունես՝ ծառադ է: (2)

ԱՍԵԱ.— (Ուժաշերտ) Այո, կը գնամ:

ՍՈՒԼԹ.-Բ.— Քնձ աղջիկ. դու Գիւլջօճրայից խելօք դուրս
եկար. լաւ, շատ լաւ.

Վէլի.— (Թէլլիի հետ միմեանց նայելուց յետոյ). Ախ:

ՍՈՒԼԹ.-Բ.— Այ տղայ, այդ ի՞նչ վատ ա՛խ քաշեցիր. քո
դա՞րդը ինչ է:

ԱՍԿԵՍՐ.— Ի՞նչ դարդ պէտք է ունենայ. Գիւլջօճրային
ինձ տւիր, Ասեան Սիւլէյմանին տւիր, մօրա-
քրոջս դուն առար, հիմի Թէլլիին էլ տուր ծա-
ռային:

ԲՈՂՈՐԸ.— Ճիշտ է, ճիշտ է:

ՍՈՒԼԹ.-Բ.— Աղջի Թէլլի, Վէլիին կը գնան:

Թէլլի.— Կամուսնանամ ես նրա հետ՝ ով որ փողեր
շատ ունի, (2)

Ով որ փողեր շատ ունի և հոգս ու ցաւեր
չունի: (2)

Փող ունենա: (2)

Վէլի.— Կայ, կայ: (2)

Թէլլի.— Փող ունես՝ ես քոնն եմ, (2)

Փող ունես՝ ծառադ եմ: (2)

ԽՈՒՄԲԸ.— Փողը այնպիսի մի բան է, որի ոյժը
շատ մեծ է, (2)

Փողի ոյժը շատ մեծ է, ամեն բանի
կը յաղթէ: (2)

Փող ունենա: (2)

Վէլի.— Կայ, կայ: (2)

ԽՈՒՄԲԸ.— Փող ունես՝ նա քոնն է, (2)

Փող ունես՝ ծառադ է: (2)

Թէլլի.— (Համարձակ) Այո, կը գնամ:

ՍԻԻԼԷՄ.— Վէլի, Թէլլիին կառնես:

Վէլի.— (Ամսնչկոտն եւ յանկարծ) Այո, կառնեմ: (Ծիծա-
ղում է):

ԲՈՂՈՐԸ.— Աստուած շնորհաւոր անէ:

ՍՈՒԼԹ.— Բ.— Լաւ, բայց ե՞րբ սկսենք հարսանիքները:

ԲՈՂՈՐԸ.— Հէնց այսօրուանից:

ՍՈՒԼԹ.— Բ.— Ուրեմն սկսենք. շարեցէք տեսնեմ: (2ոյգ
զոյգ պարում են. սկզբում ծանր, յետոյ աւելի
ու աւելի արագ):

ՎԱՐԱԳՈՅՐ

Վ Ե Ր Ջ

Մամուլի զանազան օրգաններում բարձրա-
ցած մի անտեղի աղմուկ, պատճառ դարձաւ, որ
երգախառն այս պիէսը թարգմանենք, և տանք
ընթերցող հասարակութեան ձեռքը:

Հեղինակը պարզ, անպաճոյճ խօսքերով,
բայց արեւելցու սիրած և ճաշակաւոր գոյներով
հանդէս է բերում այն անել անցքը, որի մէջ ա-
կամայ կուրուլթեան են մատնւած մեր մահմե-
դական հայրենակիցները և շատ մեղմ, իրան յա-
տուկ նրբութեամբ, միացնում է իր ձայնը այդ
խաւարի և աւանդութիւնների ճիրաններում տա-
ռապող ժողովրդի վերածնութեան ձգտող առա-
ջադէմ տարրերի ձայնին:

Պիէսի բնագրում ոչ մի ըստ չկայ՝ որ վեր-
դովեցնէ մեր խիղճը, մի կոպիտ ակնարկ կամ
մի անհաճոյ տեսարան՝ որ ստիպւած լինէինք
զայրոյթից մի կողմ դարձնել մեր երեսը: Ամեն
ինչ կատարուում է թուրք նահապետական ըն-
տանիքի մէջն ու շուրջը՝ նահապետական պար-
զութեամբ:

Այն կոպտութիւնները, որ թոյլ են տուել
իրանց զանազան «թարգմանիչ»-ներ և «րէժիս-
սօր»-ներ այս պիէսի նկատմամբ, հասարակու-
թեան առաջ ոչ մի արդարացում չունեն:

Մենք, մեր ոյժերի ներած չափով, աշխա-
տեցինք բնագրին հարազատ մնալ մեր թարգմա-
նութեան մէջ: Թ.

Ծանոթութիւններ.—1. Բնագրում իւրաքանչիւր
գործողութիւն բաժանուած չէ տեսիլների, մենք բա-
ժանեցինք՝ ներկայացնողների դիւրութեան համար:

2. Բ. գործողութեան (եր. 26). և չորրորդ գործ-
վերջին երգերը հեղինակը նոր է աւելացրել:

3. Այս պիէսի երգերի մի մասն է միայն բնա-
գրում. միւսները կազմուած են զանազան թարգմանիչ-
ների կողմից, պիէսը աւելի հետաքրքրական դարձնե-
լու համար: Մենք ևս երգեաժ եղանակների համեմատ
նոր խօսքեր դրինք, նրանց նորից խմբագրելով: Այդ-
պիսով այդ երգերը դարձան աւելի հարթուած և աւելի
իմաստալից՝ միաժամանակ պահելով իրանց նախկին
եղանակները:



20 23403

ՀՀ Ազգային գրադարան



NL0495516

Ep No 303/13
MAG II 15 - 11
K. V. C. H. O. U.